ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՈՒՆ

100 ՕՐ

Երևան

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 3
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ 10
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 13
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ 22
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 38
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՆՆԴԻ ՈԼՈՐՏ 53
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏ 67
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 72
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 78
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏ 83
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 89

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ախտորոշում

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգը թեև խոշորածավալ չէ, սակայն ունի՝

- բյուրոկրատական կենտրոնացվածության բարձր աստիճան.
- հաճախ հատվածային, ոչ համարժեք կարգավորումներ տարբեր ոլորտներում.
- նոր գործառույթների առանձնացման և դրանց համար այս կամ այն մակարդակի մարմինների (կոմիտեներ, ՊՈԱԿ-ներ, գործակալություններ) ստեղծման և ուռճացման միտում.
- որոշումների արագ կայացմանը խոչընդոտող իրավասությունների և պարտականությունների անհամաչափ բաշխման դրսևորումներ.
- հաշվետվողականության և պատասխանատվության կոլեկտիվ տարրալուծման միտում,

որի արդյունքում

- ՀՀ քաղաքացին բավարար ծավալով չի օգտվում ՀՀ պետական մարմինների կողմից ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով մատուցվող ծառայություններից, թեև հաճախ այդպիսի ծառայություններ առկա են.
- ՀՀ քաղաքացին պետական ծառայությունների օգտագործումը համարում է դժվար և բարդացված.
- ՀՀ գործարարները հաճախ հիասթափվում են պետական ապարատի հետ շփումներից՝ պետական չինովնիկների բյուրոկրատական, սպասողական և նախաձեռնություններից զուրկ մշակույթի պատճառով:

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. Դասական բյուրոկրատիայի հետխորհրդային տարբերակից անցում դեպի ***ճկուն, արդյունավետ և նախաձեռնող պետական կառավարման համակարգի***:

Ըստ արդեն սահմանված մոտեցումների՝ առաջիկա 5-10 տարիների ընթացքում հետևողականորեն պետք է վերանայվի ամբողջ ՀՀ օրենսդրությունը՝ ՀՀ կառավարության ծրագրով արդեն իսկ նախանշված խնդիրների շրջանակի համար, այդ թվում՝

1. ՀՀ կառավարության անդամների պաշտոնական լիազորու-թյունների ավելացման և դրան համարժեք պատասխանատվության սահմանման,
2. պետության կողմից մատուցվող ծառայությունների ավելորդ և կրկնվող գործառույթների, ընթացակարգերի և օղակների վերհանման ու վերացման, առօրյա կյանքում պետական կառավարման մարմինների հետ անհարկի շփումները նվազագույնի հասցնելու,
3. պետական կառավարման մարմինների հաշվետվողականության ու թափանցիկության ավելացման, ինչպես նաև նրանց և քաղաքացիների ու տնտեսավարող սուբյեկտների միջև արդյունավետ հետադարձ կապի ստեղծման:

Այդ ամենն արվելու է ինչպես առանձին կարևոր ոլորտների համար պարբերաբար իրականացվող զեկույցներով, այնպես էլ ՀՀ կառա-վարությունում քննարկվող յուրաքանչյուր նորմատիվ նախագծի հետ մեկտեղ նշված հարցադրումների քննարկմամբ և դրանց վերաբերյալ որոշումների ընդունմամբ:

Մասնավորապես, օրենքի կամ ՀՀ կառավարության որոշման յուրաքանչյուր նախագծի հետ միասին քննարկվելու է՝

- արդյո՞ք նախարարի լիազորությունները բավարար են այդ խնդրի որոշման համար, արդյո՞ք տրամաբանական է՝ առանց գործընթացի օբյեկտիվությունն և թափանցիկությունը կասկածի ենթարկելու, տվյալ քաղաքականության իրականացման համար ապակենտրոնացնել կառավարության կամ օրենքով տրվող լիազորությունները,

- արդյո՞ք գործընթացի բոլոր օղակներն են պատշաճ մշակված և դրանք բոլորն անհրաժեշտ են, արդյո՞ք տրվել են ֆինանսապես նպատակահարմար լավագույն տեխնոլոգիական լուծումները, որքանո՞վ են դրանք նվազեցնում քաղաքացու անհարկի շփումը պաշտոնյաների հետ,
- արդյո՞ք առկա են հրապարակայնության և հաշվետվողականության, հետադարձ կապի գործուն մեխանիզմներ:

Արդեն 2017 թվականի սկզբին բոլոր հանրապետական գործադիր մարմինների համար կսահմանավեն կատարողականի առանցքային ցուցիչները, որոնք հնարավորություն կտան չափել և խթանել գերատեսչությունների ու պաշտոնյաների նախաձեռնողականությունը, ակտիվ դիրքորոշումը և եռանդը:

Հանրային ոչ զինվորական ծառայությունների համակարգում տեղի կունենան սկզբունքների միասնականացում և իրականացման ապակենտրոնացում՝ հնարավորինս կրճատելով ոչ արդյունավետ մեխանիզմներն ու գործընթացները: ՀՀ Նախագահին ներկայացված մոտեցումներից բխող օրենսդրական փաթեթը կներկայացվի 2017 թվականի առաջին եռամսյակում:

Ինչ է արվել

1. ***Քաղաքացիներին մատուցվող ծառայությունների մատչելիության ապահովում***

   Մեկ միասնական պատուհանի ներդրում՝ պետության կողմից ծառայությունների մատուցման գործառույթները մասնավոր օպերատորներին պատվիրակելու միջոցով: Նշված աշխատանքների իրականացման համար ՀՀ կառավարության նիստերում ընդունվել են մի շարք որոշումներ, որոնցով նախատեսված են պետության կողմից ծառայությունների մատուցման գործառույթների պատվիրակումը մասնավոր օպերատորներին:

   Ներկայում գործում է 4 օպերատոր («Հայփոստ», «Արդշինբանկ», «Ամերիաբանկ», «Կոնվերս բանկ»), որոնց միջոցով քաղաքացիները և իրավաբանական անձինք կարող են

քաղաքացիական կացության ակտերի գրանցմանը, իրավաբանական անձանց պետական ռեգիստրին, անշարժ գույքի պետական միասնական կադաստրին առնչվող, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության և ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից մատուցվող մի շարք ծառայությունների, լիցենզիաների տրամադրման համար դիմումները ներկայացնել, ինչպես նաև այդ դիմումների հիման վրա համապատասխան փաստաթղթեր (ծառայություններ) ստանալ՝ առանց համապատասխան պետական մարմիններ այցելելու: Տեխնիկական խնդիրների լուծմանը զուգահեռ մատուցվող ծառայությունների շարքը կընդլայնվի:

2. ***Թույլտվությունների տրամադրման արդիականացում***

Ներկայումս շրջանառության մեջ է «Թույլտվությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունմամբ կկրճատվի գործող թույլտվությունների թիվը, կհստակեցվեն և առավել արդյունավետ կդարձվեն թույլտվությունների տրամադրման կարգը և ժամկետները: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քննարկումների առաջին փուլում ներկայացվել և այժմ գործում է թվով 132 թույլտվություն: Քննարկումների արդյունքում թույլտվությունների թիվը նվազել է 40-ով: Շուրջ 30 օրենքում ուժը կոցրած են ճանաչվել թույլտվությունների վերաբերյալ դրույթները, որոնք չեն տրամադրվել որևէ մարմնի կողմից կամ իրենց բովանդակությամբ թույլտվություններ չեն: Մինչ այժմ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թույլտվությունների տրամադրման ընթացակարգը սահմանված չէր, մարմնի համար սահմանված չէր ժամկետային կամ պահանջվող փաստաթղթերի քանակի սահմանափակում:

3. ***ՀՀ կառավարության կողմից գերատեսչությունների աշխատակազմերի և ՊՈԱԿ-ների օպտիմալացում***

Գերատեսչությունների աշխատակազմերի և ՊՈԱԿ-ների օպտիմալացման արդյունքում 2017 թվականին ակնկալվում է տնտեսել շուրջ 3,9 մլրդ դրամ: Արդյունքում ընդհանուր հաստիքների

քանակը կկրճատվի շուրջ 12 տոկոսով՝ առկա 22961-ից դառնալով 20059:

4. ՀՀ մարզային բյուջետային համակարգերի օպտիմալացում

ՀՀ վարչապետի՝ մարզային այցելությունների ընթացքում համակարգի օպտիմալացման ուղղությամբ տված հանձնարարականների արդյունքում ՀՀ Տավուշի, Արագածոտնի, Շիրակի, Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերում 2017 թվականին, ընդհանուր առմամբ, կտնտեսվի շուրջ 904 մլն դրամ:

5. Ոռոգման ոլորտի ջրօգտագործողների ընկերությունների խոշորացում

Ոռոգման ոլորտի ջրօգտագործողների ընկերությունների խոշորացման արդյունքում 37 ՋՕԸ-երից ստեղծվելու է 14 ՋՕԸ: Գործընթացը կավարտվի 2017 թվականի մարտի 1-ին: Իրականացման փուլում է գնումների և հաշվապահական հաշվառման կենտրոնացման գործընթացը: Արդյունքում կառաջանա տնտեսում՝ ՀՀ պետական բյուջեից յուրաքանչյուր տարի տրամադրվող խմելու ջրի սուբսիդիայի մասով՝ շուրջ 1.8 մլրդ դրամ (վարկի սպասարկում՝ 3.7 մլրդ դրամ) (Տես «Ենթակառուցվածքներ» նյութը):

6. ՀՀ կառավարության կողմից ինտերնետի և տվյալների փոխանցման ծառայությունների ձեռքբերման նպատակով միասնական գնումների օպտիմալացում

ՀՀ կառավարության, նախարարությունների, առանձին գերատեսչությունների, մարզպետարանների և այլ պետական մարմինների 2017 թվականի կարիքների համար ինտերնետի և տվյալների փոխանցման ծառայությունների ձեռքբերման գնումները կենտրոնացված եղանակով կազմակերպելու, ինչպես նաև գնման տեխնիկական առաջադրանքներն առավելագույնս մրցակցային կազմելու արդյունքում ՀՀ պետական բյուջեն կխնայի 523 մլն դրամ:

7. ***Կառավարության կողմից բյուջետային միջոցների վերաբաշխումների գործառույթի ապակենտրոնացում***

Ներկայումս յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեով պլանավորված միջոցների վերաբաշխումների մի մասն իրականացվում է ՀՀ կառավարության որոշումներով: Այժմ շրջանառության մեջ է օրենսդրական նախաձեռնություն, որով նախատեսվում է կրճատել ՀՀ կառավարության իրավասությունները՝ պետական բյուջեում վերաբաշխումներ կատարելու հարցում, մասնավորապես, նախատեսվում է ՀՀ կառավարության որոշումներով իրականացնել միայն պահուստային ֆոնդից հատկացումները, կապիտալ շինարարության օբյեկտների և ծրագրային հիմնական ցուցանիշների փոփոխություններն ու մեկ անձից գնումները:

8. ***ՊՈԱԿ-ների ֆինանսավորման մեխանիզմի պարզեցում***

Գործող կարգով պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված անշարժ գույքը մեկ տարվանից ավելի ժամկետով վարձակալության հանձնելիս վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում էին ՀՀ պետական բյուջե: Ընդ որում, այդ միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում ՀՀ կառավարության առանձին որոշումներով որպես դրամաշնորհ փոխանցվում էր համապատասխան կազմակերպությանը: Ներկայացված ընթացակարգը փոփոխվել է, և նշված միջոցներն այսուհետ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կուղղվեն ՊՈԱԿ-ներին՝ առանց լրացուցիչ որոշումների ընդունման:

9. ***Համայնքների 5-ամյա զարգացման ծրագրերի մեթոդաբանության վերանայում***

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը մշակել է համայնքների զարգացման ծրագրերի մշակման և կառավարման մեթոդաբանությունը, զարգացման ծրագրի օրինակելի ձևը՝ իր համապատասխան հավելվածներով: Փաստաթղթի մշակման նպատակը համայնքներում առկա պոտենցիալի, զարգացման հնարավորությունների և ուղղությունների առավելագույն բացահայտումն է: Համայնքների զարգացման նոր

ծրագրերը պետք է ուղենիշային փաստաթղթեր լինեն հնարավոր ներդրողների համար: Փաստաթղթերը տեղադրված են նաև նախարարության կայքում (http://mtad.am/hy/methodological-guides/):

Ներկայումս համայնքներում ընթանում է ծրագրերի մշակման գործընթացը:

10. ՏԻՄ գործունեության հրապարակայնության ապահովում

Համայնքներում որոշումների կայացմանը համայնքի բնակիչներին մասնակից դարձնելու և թափանցիկություն ապահովելու նպատակով 25 խոշոր համայնքների ավագանիների նիստերը հեռարձակվում են առցանց եղանակով: Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր են ներդրվել 559 համայնքում:

Աշխատանքները կշարունակվեն 2017 թվականի ընթացքում՝ համայնք-ների խոշորացմանը զուգընթաց:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Ախտորոշում

Կոռուպցիայի ցուցանիշների բարձր մակարդակը բացասաբար է անդրադառնում երկրում ներդրումային միջավայրի, տնտեսության զարգացման, քաղաքացիների կողմից իրենց իրավունքների իրացման վրա: Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի տեսանկյունից կարևոր նշանակություն ունի կոռուպցիան բացառող կամ նվազեցնող համակարգերի ձևավորումը, պաշտոնատար անձանց բարեվարքությունը, օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորումը:

Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի անկատարությունը թույլ չի տալիս կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար ծավալել: Պաշտոնատար անձանց բարեվարքության տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի այն հանգամանքը, որ հասարակության կողմից պաշտոնյաների հաշվետվելիությունը մեծացնող հայտարարագրման համակարգում բացակայում է հայտարարագրման ոլորտում խախտումների համար պատասխանատվությունը, և հայտարարագիր տվող անձանց շրջանակը սահմանափակ է:

Արդյունքում

Հայաստանում բարձր է կոռուպցիայի ընկալման համաթիվը, ինչն էլ իր հերթին բացասաբար է անդրադառնում երկրում ներդրումային միջավայրի, տնտեսական վիճակի վրա: Քաղաքացիների շրջանում արդյունքում նվազում է վստահությունը պետության կողմից իրականացվող ծրագրերի արդյունավետության նկատմամբ:

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. Ստեղծել ***կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ ինստիտուցիոնալ համակարգ***, որը թույլ կտա արդյունավետ կանխարգելել կոռուպցիան և ապահովել կոռուպցիոն հանցագործությունների դեպքում ***պատասխանատվության անխուսափելիությունը***:

Անհրաժեշտ է սահմանել վարչական կամ քրեական պատասխանատվություն բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրման գործընթացում թույլ տված խախտումների համար, ապահովել «ապօրինի հարստացման» հանցակազմի ներառումը ՀՀ քրեական օրենսգրքում, ապահովել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի զարգացում, այդ թվում՝ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմավորման սկզբունքների վերանայման միջոցով: Պետք է ապահովել հակակոռուպցիոն կանխարգելիչ և իրավապահ մարմինների հանրային հաշվետվողականության մեխանիզմների կատարելագործումը, իրականացնել գույքի և եկամուտների հայտարարագիր ներկայացնող անձանց շրջանակի ընդլայնում և փոխկապակցված անձանց շրջանակի հստակեցում, ներդնել ազդարարների պաշտպանության գործուն համակարգ:

Ինչ է արվել

1. «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը 2016 թ. դեկտեմբերի 16-ին ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից, որով քրեականացվել է ապօրինի հարստացումը:

2. Գույքի և եկամուտների հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից կանխիկ դրամով կատարվող գործարքները սահմանափակող «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը 2016 թ. դեկտեմբերի 16-ին ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից:

3. Մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի

կողմից հայտարարագիրը սահմանված ժամկետում չներկայացնելու, հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական կամ կեղծ տվյալներ ներկայացնելու համար համապատասխանաբար վարչական և քրեական պատասխանատվություններ նախատեսող օրենսդրական փաթեթը:

4. Հակակոռուպցիոն նախընտրելի մոդելի ստեղծման նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ:

5. «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և փորձագիտական հանձնախումբ ստեղծելու, խորհրդի կազմը, խորհրդի, փորձագիտական հանձնախմբի և ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը ներկայացվել է կառավարություն:

6. Մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Դատախազության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի համաձայն ՀՀ գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի՝ մինչև մարտի 1-ը, պարտավոր է հրապարակել կոռուպցիոն հանցագործությունների քննության վերաբերյալ հաղորդում ՀՀ գլխավոր դատախազության կայքէջում:

7. Իրականացվել է շահերի բախման հայտարարագրման ինստիտուտի վերաբերյալ վերլուծություն:

8. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն, որով ընդլայնվել է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը:

9. Մշակվել է «Ազդարարների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

1. Դատական ակտերի հարկադիր կատարման համակարգ

Ախտորոշում

Դատական ակտերի հարկադիր կատարման համակարգն իր՝ արդարադատությանն օժանդակելու կարևոր գործառույթը պատշաճ չի իրականացնում: ԴԱՀԿ-ի ծառայողների գործողությունների վերաբերյալ դժգոհություն են արտահայտում և՛ պարտատերերը, և՛ պարտապանները: Դժգոհությունները հիմնականում պայմանավորված են նրանով, որ օրենսդրորեն հարկադիր կատարողին կատարողական վարույթ իրականացնելիս տրված են լայն հայեցողական լիազորություններ, իր ընտրությամբ մի դեպքում գործելու պարտապանի շահերից ելնելով՝ արհեստական ձգձգելով կատարողական գործողությունների ժամկետները, մյուս կողմից՝ պարտատիրոջ շահերից ելնելով՝ պարտապանին զրկելով միակ բնակության վայրից և դարձնելով նրան անօթևան:

Նման իրավիճակը հատկապես սրվում է երեք հիմնական գործոնների պատճառով՝

- դատական ակտերի հարկադիր կատարողի որոշումների վերաբերյալ ծանուցումների թերի մեխանիզմի առկայություն.
- ԴԱՀԿ-ի համակարգում կոռուպցիոն ռիսկերի առկայություն՝ պայմանավորված հարկադիր աճուրդների կազմակերպման թերի մեխանիզմներով.
- կատարողական գործողությունների արդյունքում անօթևան դարձած քաղաքացիների բնակարանային հարցի խնդիրների լուծմանն ուղղված մեխանիզմների բացակայություն:

Արդյունքում

պարտատեր քաղաքացիների օգտին կայացված դատական ակտերի կատարումը կատարվում է չարդարացված երկար ժամկետներում կամ ոչ պատաճ: Մյուս կողմից պարտապանների համար առաջանում են որոշակի բացասական հետևանքներ՝ պայմանավորված նրանով, որ վերջիններս ուշ են ծանուցվում կատարողական գործողությունների մասին: Օրինակ, պարտապանի հաշիվները դրվում են արգելանքի տակ, այն դեպքում, երբ վերջինս ունի բանկի առջև պարտավորություններ: Բացի դրանից, վերջիններս կատարողական գործողությունների արդյունքում հաճախ զրկվում են իրենց միակ բնակարանից և հայտնվում են փողոցում:

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. Ցածր վարկանիշ ունեցող, դանդաղ գործող դատական ակտերի հարկադիր կատարման համակարգից անցում դեպի ***վստահելի, արագ և արդյունավետ դատական ակտերի հարկադիր կատարման համակարգ***:

1. Դատական ակտերի հարկադիր կատարման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն առնչվում է մարդու սեփականության՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված հիմնարար իրավունքի սահմանափակման հետ, և այստեղ կարևոր է, որ նշված սահմանափակումը լինի համաչափ և չառաջացնի լրացուցիչ իրավունքների սահմանափակում կամ նոր պարտականություններ և (կամ) պատասխանատվություն: Ուստի անհրաժեշտ է ներդնել կատարողական վարույթում ԴԱՀԿ-ի ծառայողի որոշումների, հատկապես գույքի վրա արգելանք դնելու որոշման մասին պարտապանին հնարավորինս շուտ ծանուցելու մեխանիզմներ:

2. Կատարողական գործողությունները հնարավորինս սեղմ ժամկետում իրականացնելու և այս հարցում հարկադիր կատարողի հայեցողությունը նվազեցնելու համար անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել կատարողական գործողությունների, մասնավորապես, հարկադիր աճուրդներին վերաբերող ժամկետները:

3. Անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանափակել պարտապանի պարտավորությունների հարկադիր կատարման ժամանակ վերջինիս միակ կացարանից զրկվելու հնարավորությունը:

Ինչ է արվել

1. ԴԱՀԿ-ի ծառայողի կողմից պարտապանին կարճ հաղորդագրության (sms) միջոցով գույքի վրա արգելանք դնելու մասին ծանուցման համակարգի գործարկում: Ծանուցումների բարեփոխմանն ուղղված իրավական ակտերի փաթեթի մշակում և ՀՀ Ազգային ժողով ներկայացում, որով հիմնական շեշտադրումը կատարվում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ծանուցումներին:

2. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում, որով սահմանվում են հարկադիր աճուրդի իրականացման հստակ ժամկետներ:

3. «Հրապարակային սակարկությունների մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ» կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի մշակում, որոնց արդյունքում անձը կատարողական գործողությունների արդյունքում այլևս չի զրկվի միակ կացարանից:

2. Նոտարական համակարգ

Ախտորոշում

Նոտարական գործողությունները հիմնականում ենթադրում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների առաջացում, փոփոխում և դադարում:

Նոտարի լիազորությունների ոչ պատշաճ իրականացման արդյունքում առկա են դեպքեր, երբ քաղաքացիները կրել են գույքային վնասներ:

Օրենքով նախատեսված է, որ նոտարն իր գործողությունների համար գույքային պատասխանատվություն է կրում, եթե այդ գործողությունները կատարվել են դիտավորությամբ:

Արդյունքում

քաղաքացիները, ովքեր տուժել են նոտարի անզգուշությամբ կատարված գործողություններից, հայտնվել են խոցելի վիճակում, քանի որ նման դեպքում նոտարի պատասխանատվության մեխանիզմները բացակայում են:

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. Ռիսկային նոտարական համակարգից դեպի ***վստահելի և պատասխանատու նոտարական դատական համակարգ***:

Անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել նոտարի կողմից իր գործողությունների կատարման համար պատասխանատվության գործուն մեխանիզմներ՝ նախատեսելով նոտարի պատասխանատվություն նաև իր՝ անզգուշությամբ կատարված գործողությունների համար:

Ինչ է արվել

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի մշակում, որով հստակ սահմանվել է նոտարի կողմից գույքային պատասխանատվություն (վնասի հատուցում) իր գործողություններով պատճառված վնասի համար, անկախ՝ մեղքի ձևից (դիտավորություն կամ անզգուշություն): Բացի դրանից, նախատեսվել է, որ նոտարի միջոցների անբավարարության դեպքում վնասն ամեն դեպքում ենթակա է հատուցման նոտարական պալատի կողմից ձևավորված պահուստային ֆոնդից:

3. Քրեական պատիժների կատարման համակարգ

Ախտորոշում

Խորհրդային տարիներից ժառանգված քրեակատարողական հիմնարկների խարխուլ շենքերը, քրեակատարողական միջազգային չափանիշներին չհամապատասխանող օրենսդրությունը, քրեակատարողական հիմնարկների ոչ արդյունավետ առողջապահական համակարգը թույլ չեն տալիս ամբողջությամբ երաշխավորել քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց իրավունքները:

Արդյունքում

Որոշ դեպքերում խախտվում են քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց իրավունքները, միջազգային և իրավապաշտպան կազմակերպությունների կողմից քրեակատարողական հիմնարկներում արձանագրվում են խախտումներ, հնարավոր չի լինում ապահովել քրեակատարողական համակարգի արդյունավետություն, որոշ քրեակատարողական հիմնարկներում ունենք գերբեռնվածության խնդիր:

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. Արդիականացնել քրեական պատիժների կատարման ոլորտի օրենսդրությունը և քրեակատարողական ինստիտուցիոնալ համակարգը, ***ստեղծել օրենսդրական և ինստիտուցիոնալ երաշխիքներ*** քրեական օրենսգրքով նախատեսված պատժի նպատակների իրականացման համար:

Անհրաժեշտ է՝

1. Արդիականացնել քրեակատարողական օրենսդրությունը, արդիականացնել և օպտիմալացնել քրեակատարողական համակարգը, բարելավել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտը՝ օբյեկտիվ չափանիշների սահմանման միջոցով

ապահովելով գործընթացի արդյունավետությունը և կանխատեսելիությունը:

2. Իրականացնել քրեակատարողական առողջապահական համակարգի բարեփոխումների ծրագիրը, կատարելագործել քրեակատարողական առողջապահության ինստիտուցիոնալ համակարգը, հիմնովին վերանայել «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի կարգավիճակը՝ ընդհուպ մինչև լուծարումը:

3. Իրականացնել քրեակատարողական հիմնարկների «խոշորացման» ծրագիրը՝ ռեսուրսների առավել արդյունավետ բաշխումն ապահովելու նպատակով:

4. Բարելավել դատապարտյալների պահման պայմանները, ապահովել Պրոբացիայի պետական ծառայության գործունեության պատշաճ գործարկումը, ապահովել այլընտրանքային խափանման միջոցների և քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված անվտանգության միջոցների կիրարկումը:

5. Օրենսդրությամբ ամրագրել ազատության զրկման հետ չկապված լրացուցիչ խափանման միջոցներ և պատժատեսակներ:

Ինչ է արվել

1. Մշակվել և շրջանառվել են «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որով արդիականացվում է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը:

2. Իրականացվում է «Ամրապնդել առողջապահությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում» ծրագիրը:

3. ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՀՀ քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացման

հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման նախագիծը:

4. ՀՀ արդարադատության նախարարության 11 քրեակատարողական հիմնարկների բուժմասերի համար առաջնային բժշկական օգնության տրամադրման համար անհրաժեշտ ժամանակից պարագաների և սարքավորումների ձեռքբերման համար անցկացվող մրցույթը կայացել է:

5. Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի աջակցությամբ 10 քրեակատարողական հիմնարկում իրականացվել է էներգախնայողության ծրագիր, որի շրջանակում նշված քրեակատարողական հիմնարկներում իրականացվել են շինարարական և վերանորոգման աշխատանքներ, փոխվել են պատուհանները, իրականացվել են ջերմամեկուսացման աշխատանքներ, ներդրվել են գազային և արևային ջեռուցման ու տաք ջրի համակարգեր, բոլոր լամպերը փոխվել են էներգախնայող լամպերով:

6. Ստեղծվել է Պրոբացիայի պետական ծառայությունը: Պրոբացիայի պետական ծառայության ծառայողները պարբերաբար վերապատրաստվում են: Դատապարտյալների էլեկտրոնային հսկողության միջոցները 2017 թվականի հունվարից կկիրարկվեն:

7. Մշակվել են ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի նախագծերը, որոնցով նախատեսել են ազատության զրկման հետ չկապված խափանման միջոցներ և պատժատեսակներ:

4. Պետության կողմից քաղաքացիներին ծառայությունների մատուցում

Ախտորոշում

Պետության կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ոչ բավարար մատչելիություն (տարածքային, մի քանի պետական մարմինների դիմելու անհրաժեշտություն, երկար ժամկետներ, բարդ վարչարարություն և այլն):

Արդյունքում

Ծառայությունները տարածքային առումով հասանելի չեն գյուղական համայնքների բնակչությանը, քաղաքացիները հաճախ ստիպված են լինում ծառայություն ստանալու համար դիմել և փաստաթղթեր հավաքել մի քանի պետական մարմիններից, կատարել չիմնավորված ծախսեր: Բարդեցված է պետական ծառայություններից օգտվելու վարչարարությունը, իսկ ժամկետները հաճախ անհիմն երկար են:

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. Պետական ծառայություններից օգտվելու ընթացքում ***վարչարարության պարզեցում***, ***ժամկետների կրճատում***, պետական ծառայություններ իրականացնելու որոշակի գործառույթների ***պատվիրակում մասնավոր սուբյեկտներին***, պետական ծառայությունների մատուցման գործընթացում ***էլեկտրոնային գործիքների ներդրում***:

Անհրաժեշտ է՝

1. ապահովել մեկ միասնական պատուհանի ներդնումը.
2. պետության կողմից ծառայությունների մատուցման գործառույթների՝ մասնավոր օպերատորներին պատվիրակում.
3. ապահովել էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցման խթանումը.

4. իրականացնել տարբեր պետական մարմինների էլեկտրոնային շտեմարանների համակցում՝ քաղաքացիներին մեկ պատուհանից ծառայություններ մատուցելու նպատակով:

Ինչ է արվել

1. Ընդունվել է ՀՀ կառավարության 2016 թ. հոկտեմբերի 27-ի N 1109-Ն որոշումը, որով նախատեսված է պետության կողմից ծառայությունների մատուցման գործառույթների պատվիրակումը մասնավոր օպերատորներին.
2. Երեք բանկեր և Հայփոստ ընկերությունը ճանաչվել են որպես պետության կողմից ծառայությունների մատուցման գործառույթներ իրականացնող օպերատորներ.
3. Բացվել է պետական ծառայությունների մատուցման 7 գրասենյակ՝ Երևան քաղաքում և հանրապետության 3 մարզում.
4. Օպերատորները մատուցում են ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններ:
5. Համակցվել են ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գործակալության և առողջապահական հաստատությունների տեղեկատվական շտեմարանները:
6. Մշակվել են քրեակատարողական համակարգի, իրավական ակտերի հանրային քննարկման նոր էլեկտրոնային գործիքներ, լրամշակվել են իրավաբանական անձանց պետական ռեգիստրի, նոտարիատի էլեկտրոնային կառավարման ծրագրերը:
7. Բոլոր նոր մշակվող և արդիականացվող էլեկտրոնային ծրագրերը համակցվում են պետական այլ էլեկտրոնային շտեմարանների հետ (անձնագրային, սոցիալական, վիճակագրական և այլն):
8. Մայրուղիների արագաչափերի կառավարումը անցել է պետությանը՝ դառնալով ավելի թափանցիկ և հաշվետվելի:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

1. Արտահանում

Ախտորոշում

Հայաստանը, հանդիսանալով փոքր ներքին շուկայով երկիր և ունենալով մասշտաբի էֆեկտի բացակայություն, պետք է զարգացման մոդելը կառուցի արտահանմամբ պայմանավորված տնտեսական աճի վրա:

Սակայն հարկ է նշել, որ դեռևս արտահանումը ՀՆԱ-ի կազմում ունի փոքր տեսակարար կշիռ. 2015 թվականին ապրանքների արտահանումը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 15.4%, իսկ ապրանքների և ծառայությունների արտահանումը՝ 29.8%: Չնայած 2016 թվականին արտահանման կանխատեսվող զգալի աճին, ՀՆԱ-ի նկատմամբ ապրանքների արտահանման հարաբերակցության ցուցանիշը կմնա ցածր՝ մոտավորապես 18%.

Շարունակում է խնդրահարույց լինել արտահանման կենտրոնացման մեծ աստիճանն ինչպես շուկաների, այնպես էլ արտահանվող ապրանքատեսականու մասով: Անբավարար է դեպի հարևան պետություններ ապրանքների արտահանման ծավալը. 2015 թվականի ընթացքում դեպի Ռուսաստանի Դաշնություն ապրանքների արտահանումը Ռուսաստանի մեկ բնակչի հաշվով կազմել է 1.7 ԱՄՆ-ի դոլար, իսկ նույնը դեպի Իրանի Իսլամական Հանրապետություն՝ 1.0 ԱՄՆ-ի դոլար:

Արդյունքում

- արտահանման ներուժ ձևավորող կլաստերների բացակայություն և ձեռնարկությունների արտահանման պոտենցիալի ցածր մակարդակ.
- արդյունաբերական ձեռնարկությունների կողմից ապրանքային արտադրանքի ավելացման ուղղությամբ ներդրումների բացակայություն.

- արտահանումն սպասարկող և արտահանմանն աջակցող շուկայական ծառայությունների՝ լոգիստիկ ծառայությունների, արտահանման վարկավորման ու ապահովագրման ծառայությունների զարգացվածության ցածր մակարդակ:

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. Նեղ ուղղվածությամբ արտահանող տնտեսությունից ***անցում դեպի դիվերսիֆիկացված***, արտահանման խթանման ենթակառուցվածքներով ապահովված, արտաքին, առաջին հերթին՝ հարևան ***շուկաների պահանջարկին արագ արձագանքող տնտեսության***:

Այս տարվա՝ Հայաստանից արտահանման աճը ռեկորդային է եղել՝ շուրջ 21 տոկոս, իսկ 4-րդ եռամսյակում նախկին տարվա նույն ժամանակաշրջանի հետ համեմատած՝ մոտավորապես 25%: Եվ սա՝ չնայած մեր արտահանման խոշոր ճյուղերից մեկի համար բացասական ազդեցություն ունեցող մետաղների միջազգային գների նվազման: 2016 թվականի արտահանման ծավալների նման աճը, անցնող տարվա թերևս ամենակարևոր տնտեսական ձեռքբերումն է, և հարկ է ջանքեր գործադրել, որպեսզի այդ տեմպը պահպանվի:

Հաշվի առնելով Հայաստանի տնտեսության առանձնահատկությունները՝ արտահանման առաջընթացիկ աճը պետք է հանդիսանա տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժ: Որպես առաջնային նպատակադրում, անհրաժեշտ է սահմանել ՀՆԱ–ի կառուցվածքում արտահանման առնվազն 40-45 տոկոս կշռի ապահովումը:

Նախանշված խնդիրների լուծման և արտահանմանն աջակցելու նպատակով աշխատանքներ են տարվում մինչ այժմ չօգտագործված կամ ոչ բավարար օգտագործված գործիքակազմի բացահայտման և դրանք կիրառելու ուղղությամբ՝ նպատակ ունենալով անհրաժեշտ հիմքեր ստեղծել արտահանման նոր շուկաներ ներթափանցման և առկա շուկաներում դիրքերի ամրապնդման և ընդլայնման համար:

Կառավարության ծրագրով նախանշված խնդիրների լուծման նպատակով՝

1. Հայաստանի համար արտոնյալ առևտրային ռեժիմ ունեցող շուկաների մուտքի հնարավորությունների առավել լայն օգտագործում: Այս տեսանկյունից առաջին հերթին կարևորվում է ԵԱՏՄ երկրներ արտահանման ներուժի օգտագործման ցածր մակարդակով պայմանավորված՝ հայրենական արտադրանքի խմբաքանակների սահմանափակությունը, բեռնա-փոխադրումների անկայունությունը և շուկաներ մուտքի խոչընդոտների առկայությունը:

2. Տարածաշրջանային երկրների շուկաներում հայկական ապրանք-ների մուտքի ապահովում և արտահանման զգալի ավելացում՝ Հայաստանում կատարված սերտիֆիկացման արդյունքները ճանաչելի դարձնելու, տարածաշրջանային հատուկ առևտրի գոտիների ստեղծման և մասնակցության միջոցով:

3. Վերազգային կորպորացիաների ցանցերի կողմից հայաստանյան կազմակերպությունների արժեստեղծման շղթայում դիրքավորմանը նպաստող համապատասխան միջավայրի ձևավորում:

4. Գործարար կապերի խթանում, արտերկրում հայկական արտա-դրանքի ճանաչելիության բարձրացում, արտահանման նոր շուկաների բացահայտում, այդ թվում՝ վերլուծելով արաբական երկրների շուկաների պահանջները:

5. Արտահանման պետական աջակցության գործիքների ավելի լայն կիրառում:

Ինչ է արվել

1. ԵԱՏՄ շուկաներ հայաստանյան ապրանքատեսակների արտա-հանման խնդիրներին օպերատիվ լուծումներ տալու նպատակով Ռուսաստանի Դաշնության Վերին Լարս մաքսային կետի, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պաշտոնյաների մասնակցությամբ դեկտեմբեր ամսին ձևավորվել է աշխատանքային խումբ.

2. Մշակվել և ԵԱՏՄ հանձնաժողովին են ներկայացվել տեղական արտադրատեսակների առանձնահատկությունը սահմանող ստանդարտներ, որոնց ընդունումը հնարավորություն կտա առանց խոչընդոտների արտահանելու ԵԱՏՄ անդամ երկրներ տեղական արտադրատեսակները և պաշտպանելու տեղական արտադրողներին:

3. ՀՀ-ում առկա լոգիստիկ կազմակերպությունների հետ, որոնք արտերկրում, մասնավորապես, ԵԱՏՄ երկրներում, ունեն համապատասխան լոգիստիկ ենթակառուցվածքներ (պահեստային և գրասենյակային տարածքներ), քննարկումներ են ընթանում, պետական-մասնավոր հատված համագործակցության ձևաչափով, հայկական փոքր և միջին ձեռնարկությունների արտադրանքի ներկայացմանն աջակցության և արտահանման հնարավորությունների օգտագործման ուղղությամբ: Մասնավորապես, այդ կազմակերպություններն են «Այս Հաուս», «Սպայկա» և մի քանի այլ ընկերություններ:

4. Եվրոպական Միության շուկա մուտքի դուրացման ուղղությամբ կարևոր քայլ էր այն, որ 2016 թվականի նոյեմբերին ՀՀ «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը դարձել է հավատարմագրման եվրոպական համագործակցության ասոցացված անդամ և ստորագրվել է անդամակցության համաձայնագիր: Ինչն առաջիկայում հնարավորություն կընձեռի Հավատարմագրման ազգային մարմնի կողմից հավատարմագրված լաբորատորյաների կողմից ներկայացված փորձաքննության արդյունքների ճանաչմանը ԵՄ-ի երկրներում:

5. Բանակցություններ են տարվում Իրանի Իսլամական Հանրապետության Ստանդարտների և արդյունաբերական հետազոտությունների ինստիտուտի հետ Հայաստանում կատարված սերտիֆիկացման արդյունքները ճանաչելի դարձնելու և Հայաստանում պարենային և ոչ պարենային արտադրանքի համապատասխանության գնահատման մարմինների

ներկայացուցչություններ կամ մասնաճյուղեր բացելու ուղղությամբ: Դա թույլ կտա նախապես համաձայնեցված եղանակով Հայաստանում կատարված համապատասխանության գնահատման արդյունքները ճանաչելի դարձնել Իրանի Իսլամական Հանրապետությունում: Իրանական կողմն արդեն իսկ դրական է արձագանքել այդ նախաձեռնությանը:

6. Աշխատանքներ են տարվում Իրանի հետ սահմանագծին ազատ տնտեսական գոտու ձևավորման ուղղությամբ: Մշակվել են ազատ տնտեսական գոտու ստեղծման հայեցակարգային մոտեցումներ և գործարար ծրագիր, նախաձեռնվել է պոտենցիալ կազմակերպիչների նախնական առաջարկների հավաքագրման գործընթացը: Նախատեսվում է, որ մինչև ապրիլ ամիսն ազատ տնտեսական գոտու ստեղծման աշխատանքներն սկսված կլինեն:

7. Արաբական Միացյալ Էմիրություններ կատարած այցի արդյունքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել հայկական գյուղմթերքի և սննդամթերքի արտահանման ուղղությամբ: Առաջիկայում նախատեսվում է Էմիրությունների պատվիրակության այց Հայաստան, որի ընթացքում կհստակեցվի այդ ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների ճանապարհային քարտեզը:

8. Քննարկումներ են տարվում վերազգային կորպորացիաների հետ իրենց ցանցերում հայկական արտադրանքի ներկայացվածությունն ապահովելու ուղղությամբ: Մասնավորապես, կազմակերպվել է METRO AG ընկերության ռուսաստանյան ներկայացուցչության պատվիրակության այցը: Ներկայումս բանակցություններ են տարվում մի շարք ընկերությունների հետ հայկական արտադրանքի արտահանման ուղղությամբ: Պանրի արտահանման նպատակով ընկերությունները բանակցություններ են վարում նաև ռուսական «Լենտա» և x5 առևտրային ցանցերի հետ:

Առաջիկա քայլեր

1. 2017 թվականի սկզբին կպարզեցվեն արտահանողներին ԱԱՀ-ի վերադարձման մեխանիզմները և կսահմանվեն ԱԱՀ-ն արտահանողներին վերադարձնելու ժամկետների փուլային կրճատման մոտեցումները:
2. Կքննարկվեն և ՀՀ կառավարության հաստատմանը կներկայացվեն արտահանման ապահովագրության կատարելագործման նոր գործիքների ներդրման մոտեցումներ:
3. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների հետ ակտիվ աշխատանքներ կտարվեն հայկական ապրանքների արտահանմանն աջակցելու մինչ այժմ չօգտագործված նոր հնարավորություններ բացահայտելու և դրանք կիրառելու ուղղությամբ:

2. Գործարար միջավայր

Ախտորոշում

Չնայած գործարար միջավայրը գնահատող միջազգային կազմակերպությունների հարցման արդյունքներով արձանագրված առաջընթացին՝ Հայաստանում դեռևս՝

- «Գործարարությամբ զբաղվելը» Համաշխարհային բանկի զեկույցի հիմք հանդիսացող 10 գնահատման ցուցանիշներից 4-ի մասով (Էլեկտրականության միացում, Շինարարական թույլտվությունների ստացում, Սնանկության ճանաչում և Հարկերի վճարում) Հայաստանի միջին դիրքը շարունակում է մնալ բավական ցածր: Նշված 4 ցուցանիշների միջին դիրքը 81-րդն է այն դեպքում, երբ գնահատվող բոլոր 10 ցուցանիշների միջինացված հանրագումարով Հայաստանն զբաղեցրել է 38-րդ տեղը.
- Դեռևս առկա է վարչարարություն իրականացնող մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված պահանջների անհամաչափ կամ անհավասար կիրառություն.

- Ցածր է դատական համակարգի արդյունավետությունը՝ վարչական կամ տնտեսական վեճերի, ինչպես նաև մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության հարցերում:

Արդյունքում

- ցածր է «գործարար միտք – գործարար նախաձեռնություն – գործարար ծրագրերի իրականացում» շղթայի արդյունավետությունը.
- ՀՆԱ-ում ցածր է փոքր և միջին բիզնեսի մասնակցությունը.
- բարձր են բիզնես ծրագրերի անընդհատության ռիսկերը.
- ցածր է ձեռնարկատիրության միջոցով հաջողության հասնելու հավատը.

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. Բիզնեսի համար անկանխատեսելի ռիսկեր պարունակող գործարար միջավայրից ***անցում ապահովել դեպի այնպիսի միջավայր, որտեղ պետության կարգավորումներն ունեն նվազագույն անհրաժեշտ ծավալ, բարձր հստակություն, համաչափ և հավասար կիրառություն, կայունություն և կանխատեսելիություն***, իսկ բիզնես վեճերը կարգավորվում են արդար և արդյունավետ (հատկապես՝ ժամանակային)

Նշված ուղղությամբ արագ անցման նպատակով պետք է առաջնահերթ լուծվեն, այդ թվում՝ ՀՀ կառավարության ծրագրով նախանշված հետևյալ խնդիրները՝

1. նոր գործարար նախաձեռնություններին պետական աջակցության մեխանիզմների լրացում նոր՝ արդյունավետ գործիքներով.
2. ՓՄՁ նախաձեռնությունները կենսունակ բիզնես ծրագրեր դարձնելու գործընթացի՝ արդյունավետ պետական աջակցության մեխանիզմների ստեղծում.

3. խոշոր ներդրումային ծրագրերի ընթացքի մշտադիտանցում և դրանց առանձնահատուկ խնդիրների կարգավորում:

Նշված ուղղություններով գործարար համայնքի հետ փոխադարձաբար ընկալելի օրակարգ կազմելու ուղղությամբ սկսվել են քննարկումներ՝ արդյունավետ համագործակցության հարթակներ ձևավորելու ուղղությամբ: Կայացել են մի շարք հանդիպումներ՝ առաջնահերթ լուծում պահանջող հարցերի և դրանց կարգավորման օրակարգ ձևավորելու նպատակով:

Ինչ է արվել

1. Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի շրջանակում գնահատման առաջընթաց ապահովելու նպատակով՝
    a. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համատեղ քննարկումների արդյունքում ձևավորվել է գործող ընթացակարգերի պարզեցման փաթեթ.
    b. մշակվել են մի շարք օրենքների նախագծեր՝ փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության նպատակով.
    c. Գործարար միջավայրի բարելավման ոլորտում ՀՀ կառավարության կողմից հավանության են արժանացել մի շարք օրենսդրական նախաձեռնություններ.
2. նվազեցվել է գյուղատնտեսության ոլորտի ջերմոցային տնտեսությունների և վերամշակող կազմակերպությունների կողմից սպառվող բնական գազի սակագինը.
3. թվարկվել են հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելու հանցագործություն համարվող բոլոր գործողությունները, ինչպես նաև կրկնակի բարձրացվել է դրանք չվճարելու խոշոր չափի նվազագույն շեմը՝ 2 մլն դրամից դառնալով 4 մլն դրամ.
4. հարկերից ազատվել են սահմանված գործունեության տեսակներն ինքնուրույնաբար իրականացնող ֆիզիկական անձինք (այդ թվում՝ ԱՁ), որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում իրա-

ցումից հասույթը չի գերազանցել 9,0 մլն դրամը՝ այդ գործունեության տեսակների մասով:

5. մասնավոր հատվածի հետ համագործակցության նպատակով ստեղծված հարթակներում և առանձին ընկերությունների հետ կայացած հանդիպումների ժամանակ ընկերությունների կողմից բարձրացվել են խնդիրներ և շուրջ 30 ընկերությունների կողմից բարձրացված խնդիրներին տրվել են լուծումներ:

6. Ռուսաստանի Դաշնությունից ալմաստի հումքի մտակարարումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հանդիպում է կազմակերպվել ՌԴ պետական գանձարանի (Գոխրան) ղեկավար պրն Ա. Յուրինի և «ԱԼՌՈՍԱ» ընկերության նախագահ պրն Ա. Ժարկովի հետ: Արդյունքում՝ հաջորդ տարվանից կսկսվեն ալմաստի հումքի կանոնավոր մատակարարումները ՌԴ Գոխրանից:

7. ՀՀ կառավարության հավանությանն են արժանացել «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում կատարվող փոփոխությունները և լրացումները, որի համաձայն օրենքի շրջանակում տրամադրվող հարկային արտոնություններից օգտվելու նախկին ժամկետի՝ 2020 թվականի հունվարի 1-ի փոխարեն արտոնություններից օգտվելու ժամկետը սահմանվել է 5 տարի:

8. 2016 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին օրենքի շրջանակում տրամադրվող հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հավաստագրվել են 41 սկսնակ տնտեսավարող սուբյեկտներ, որոնց կողմից ստեղծվել են 120 նոր աշխատատեղեր:

9. Հոկտեմբերից գործում է Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը: 2016թ. կենտրոնում կազմակերպված դասընթացներին մասնակցել են 4380 աշակերտներ, ուսանողներ և մասնագետներ, կենտրոնի կողմից բիզնես խորհրդատվություն և աջակցություն է տրամադրվել 68 սկսնակ թիմերի, ընկերությունների և անհատ ձեռնարկատերերի:

10. Երևանի պետական համալսարանում նոյեմբերից գործում է «IBM»-ի Նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնը: 2016 թվականի կենտրոնում կազմակերպվել են 100 դասընթացներ և սեմինարներ, որոնց մասնակցել են 1500 մասնակիցներ, ինչպես նաև կենտրոնի կողմից բիզնես խորհրդատվություն է տրամադրվել 30 սկսնակ թիմերի:

Առաջիկա քայլեր

- 2017 թվականի առաջին եռամսյակում նոր ձևաչափով կգործի մեկ կանգառի կենտրոնը, որտեղ կլսվեն գործարար համայնքից եկող բոլոր խնդիրները և կտրվեն համապատասխան լուծումներ.
- 2017 թվականին կմշակվի բիզնես հաշտարարի ինստիտուտի ներդրման հայեցակարգը՝ 2018 թվականին ինստիտուտի գործարկման նպատակով:

3. Ներդրումներ

Ախտորոշում

Հայաստանում տնտեսական աճի երկարաժամկետ բարձր ցուցանիշներ ապահովելու գրավականներից է օտարերկրյա ներդրումների հոսքի բարձր մակարդակը: Սակայն, 2016 թվականի առաջին 9 ամիսների ընթացքում ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերի ծավալը կազմել է 92 մլն ԱՄՆ-ի դոլար, որը ՀՆԱ-ի շուրջ 1.3%-ն է, ինչը երկարաժամկետ տնտեսական աճ ապահովելու համար բավարար չէ:

Արդյունքում

- Հայաստանի երկարաժամկետ տնտեսական աճի հնարավորությունը մնում է խիստ սահմանափակ.
- Հայաստանի տնտեսությունը զրկվում է՝ օտարկերյա ներդրումներն ուղեկցող նոր արտադրական տեխնոլոգիաների, կառավարման նոր մշակույթի մուտքի հնարավորությունից.
- Հայաստանը կորցնում է տարածաշրջանային տնտեսական մրցունակությունը:

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. ***Օտարերկրյա ներդրումների***՝ ներկայիս ՀՆԱ-ի 1-2% ցածր մակարդակից ***կտրուկ աճի ապահովում***:

Այդ նպատակով պետք է առաջնահերթ լուծվեն ՀՀ կառավարության ծրագրով նախանշված հետևյալ խնդիրները՝

1. ներդրումների պաշտպանության և դրա նկատմամբ վստահության մակարդակի բարձրացում.
2. ներդրումային ծրագրերի և դրանց իրականացման լրացուցիչ հնարավորությունների ձևավորում.
3. Հայաստանի՝ որպես ներդրումների իրականացման ապահով և շահեկան վայրի ճանաչելիության բարձրացում:

Ինչ է արվել

1. Մշակվել է օտարերկրյա ներդրումների մասին նոր օրենք, որով նախատեսվում է օրենսդրորեն ուժեղացնել և միջազգային առաջադեմ ստանդարտին հասցնել ներդրողների պաշտպանության և երաշխիքների համակարգը: Այն կերաշխավորի ընդունված նորմը, որ օտարերկրյա ներդրողները պետք է ստանան ոչ պակաս բարենպաստ վերաբերմունք, քան

տեղական ներդրողները, պետության կողմից իր գործառույթներն իրականացնելիս ներդրումների մասով կապահովվի արդարացի, ոչ խտրական, կանխատեսելի վերաբերմունք և վեճերի լուծման ժամանակ այլընտրանքային միջոցների կիրառման (արբիտրաժի) հնարավորությունը, այդ թվում՝ տեղական ներդրողների համար՝ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի փոփոխության միջոցով: Ներկայումս արբիտրաժ հնարավոր է դիմել միայն ներպետական բոլոր միջոցներն սպառելուց հետո, ինչը հաճախ անհնար է դարձնում արբիտրաժ դիմելը:

2. Մասնավոր հատվածից, ճյուղային նախարարություններից և ՀՀ վարչապետի մարզեր կատարած այցերի արդյունքում մարզերից ստացված ներդրումային ծրարգրերի հարթակի միջոցով հավաքվում են բոլոր բիզնես գաղափարները, որոնք կարող են հիմք հանդիսանալ տեղական նշանակության ներդրումային ծրագրերի զարգացման համար: Արդեն իսկ հավաքագրվել է շուրջ 160 քննարկման ենթակա ներդրումային ծրագիր, որոնցից մոտ 110-ը մարզերում (մոտ մոտավորապես 240 մլն դոլար արժողությամբ):

3. Իրականացված աշխատանքների արդյունքում, 2017 թվականի առաջին եռամսյակում կգործարկվեն կամ իրենց գործունեությունը կնդլայնեն թվով 8 ընկերություն, որոնք շուրջ 3 մլրդ դրամ ներդրումների արդյունքում կստեղծեն շուրջ 824 աշխատատեղեր:

4. Կազմակերպվել են հինգ ներդրումային համաժողովներ, որոնց ընթացքում ներկայացվել են Հայաստանում ներդրումների համեմատական առավելությունները և դրանց միջոցով բացվող հնարավորությունները՝ դեպի այն շուկաներ, որտեղ Հայաստանի համար սահմանված են առանձնահատուկ արտոնյալ առևտրային պայմաններ:

5. Հայաստանի զարգացման հիմնադրամի կողմից նախագծվել և ներդրվել է ներդրումների խթանման և ներդրողների սպասարկման «մեկ պատուհան»-ի սկզբունքով գործող համակարգը՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վրա:

Առաջիկա քայլեր

1. Հավաքագրված իրատեսական ներդրումային ծրագրերի իրականացմանը նպաստելու նպատակով 2017 թվականի առաջին եռամսյակում կստեղծվի ներդրումային ֆոնդ: Նախատեսվում է, որ վերջինիս մասնակցությամբ կիրականացվեն առավել հեռանկարային և շահավետ ներդրումային ծրագրերը:
2. Գործարար հանրության հետ քննարկումների արդյունքների և միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա կներկայացվի Հայաստանում պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) արդյունավետ մոդելը: Հայեցակարգի հիման վրա կմշակվի ՊՄԳ նոր օրենսդրություն, ինչը թույլ կտա ավելի հստակ և ընկալելի մեխանիզմներով իրականացնել ՊՄԳ, այդ թվում՝ ենթակառուցվածքային ծրագրերի մասով:
3. 2017 թվականի մարտին նախատեսվում է կազմակերպել հայ-էմիրաթական ներդրումային համաժողով, ինչպես նաև 2017 թվականի փետրվարի երրորդ տասնօրյակում՝ ներդրումային համաժողով Ֆրանսիայում:

4. Զբոսաշրջություն

Ախտորոշում

Հայաստանը համաշխարհային շուկայում դեռևս լավ ճանաչված չէ որպես զբոսաշրջային երկիր, ոչ հայկական ծագումով զբոսաշրջիկների թիվը դեռևս ցածր է, տուրիզմի ենթակառուցվածքները բավարար չափով զարգացած չեն: Ի լրումն ծովին ելքի բացակայության և ցամաքային չորս սահմաններից երկուսը փակ լինելուն՝ առկա է նաև օդային փոխադրումների մրցակցության և աշխարհագրական դիվերսիֆիկացիայի խնդիր: Սահմանային անցման գործընթացները (այդ թվում՝ վիզային ռեժիմի) ևս պահանջում են դյուրացում: Հայաստանում զբոսաշրջության ներուժը բավականաչափ բացահայտված, գույքագրված և օգտագործված չէ, առկա չէ զբոսաշրջիկների տարբեր (այդ թվում՝ ներքին) խմբերի համար բազմազանեցված առաջարկ:

Արդյունքում

- տուրիզմը չունի այն մասնակցությունը տնտեսության մեջ, որի ներուժն ունենք.
- տուրիզմի ազդեցությունը հանրապետության մարզերում խիստ սահմանափակ է:

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. Համաշխարհային շուկայում Հայաստանի և հայկական զբոսաշրջային պրոդուկտի մրցունակության շարունակական բարձրացման միջոցով ***զբոսաշրջիկների քանակի շարունակական երկնիշ աճ և համաչափ տեղաբաշխում ամբողջ հանրապետությունում***:

Այդ նպատակով ՀՀ կառավարության ծրագրին համապատասխան պետք է իրականացնել՝

1. թիրախային շուկաներում ակտիվ և արդյունավետ մարքեթինգային և խթանման միջոցառումներ.
2. սահմանային անցման գործընթացների դյուրացում, այդ շրջանակում Ճապոնիայի, Կանադայի, Ծոցի որոշ երկրների քաղաքացիների համար առանց վիզային ռեժիմի սահմանում.
3. բաց երկնքի քաղաքականության արդյունավետ իրականացման միջոցով Հայաստանի հասանելիության շեշտակի մեծացում.
4. հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում.
5. օրենսդրության կատարելագործում՝ ուղղված ծառայությունների որակի չափանիշների ներդրմանը և բարենպաստ գործարար ներդրումային միջավայրի բարելավմանը:

Ինչ է արվել

1. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության համակարգում ստեղծել զբոսաշրջության պետական կոմիտե:

2. Մասնավոր հատվածի հետ քննարկվել և լրամշակվել է «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքը և առնչվող այլ օրենքների և իրավական ակտերի փաթեթը: Օրենսդրական փաթեթը ևս մեկ անգամ քննարկելով շահագրգիռ կողմերի հետ՝ կներկայացվի ՀՀ կառավարություն:

3. Մշակվել է 2017 թվականի տարեկան զբոսաշրջության զարգացման ծրագիրը, որի շրջանակում ակտիվ թիրախային մարքեթինգ իրականացնելու համար ընտրվել են հետևյալ շուկաները՝ Ռուսաստան, Չինաստան, Ճապոնիա, Ծոցի երկրներ, Արևմտյան Եվրոպայի երկրներ:

4. Դյուրացվել է Չինաստանի քաղաքացիների համար դեպի Հայաստան սահմանային անցման գործընթացը: Նոյեմբերի 10-ից Չինաստանի քաղաքացիները Հայաստան մուտքի արտոնագիր կարող են ստանալ ոչ միայն Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններից, այլ նաև սահմանային անցման կետերում կամ առցանց:

5. Քննարկվում են նաև այլ նպատակային շուկա հանդիսացող երկրների քաղաքացիների համար առանց վիզայի ռեժիմ սահմանելու հարցը (շրջանառության մեջ է համապատասխան համաձայնագիրն Արաբական Միացյալ Էմիրությունների հետ, ներկա փուլում առաջարկվում է դիտարկել Ճապոնիայի, Կանադայի, Ծոցի մի շարք երկրների քաղաքացիների համար):

6. Մշակվել է Գյումրի քաղաքի զբոսաշրջության զարգացման համառոտ ծրագիր-տեսլականը:

7. ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է Համաշխարհային բանկի «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի» 55 մլն ԱՄՆ-ի դոլար վարկի պայմանագիրը, որն ուղղված է ՀՀ համայնքներում զբոսաշրջային

ենթակառուցվածքների զարգացմանը, ծառայությունների որակի և մրցունակության բարձրացմանը:

Առաջիկա քայլեր

1. Կավելացվի աջակցությունն զբոսաշրջության մեծ պոտենցիալ ունեցող նոր ուղղությունների (լեռնագնացություն, հեծանվորդություն, էքստրեմալ տուրիզմ, էկոտուրիզմ, առողջապահական տուրիզմ, կրոնական, գինու և այլն)՝ արդեն իսկ գործող մասնավոր նախաձեռնություններին:
2. Ներդրումային ծրագրերի բազայի ստեղծման և հավանական ներդրողներին ներկայացնելու նպատակով կիրականացվի զբոսաշրջության ոլորտի ներդրումային ծրագրերի հավաքագրում:
3. Կմշակվի ծրագիր՝ առնվազն 20 զբոսաշրջության վայր չհանդիսացող պատմամշակութային հուշարձաններն ու բնության հատուկ պահպանվող տարածքներն զբոսաշրջության վայր դարձնելու համար:
4. Կմշակվի զարգացման ծրագիր՝ նպատակ ունենալով 5 տարվա ընթացքում առնվազն եռապատկել զբոսաշրջիկների թիվը:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Արտադրական ենթակառուցվածքներ

Ախտորոշում

Հայաստանի Հանրապետության ենթակառուցվածքների ոլորտի խնդիրներն են՝

1) տրանսպորտի ոլորտի և ճանապարհային ակտիվների պետական կարգավորման ոչ բավարար մակարդակը.
2) ուղևորափոխադրումների ժամանակակից կառավարման համակարգի բացակայությունը.
3) ճանապարհաշինական աշխատանքների որակի ապահովման արդյունավետ համակարգի բացակայությունը.
4) ԵՄ-ի ընդհանուր ավիացիոն գոտուն Հայաստանի անդամակցության բացակայությունը.
5) ՏՀՏ-ի ոլորտի հետագա զարգացման համար անհրաժեշտ պետական խթանիչ ծրագրերի և միջոցառումների ոչ բավարար մակարդակը.
6) ՏՀՏ-ի ոլորտի համար որակյալ կադրերի պատրաստման միասնական ռազմավարության բացակայությունը և այդ գործում Հայաստանի Հանրապետության բուհերի սահմանափակ հնարավորությունները.
7) ընդերքօգտագործման թափոնների և դրանց գործածության օբյեկտների կառավարման հետ կապված իրավահարաբերությունների բացակայությունը.
8) հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգի բացակայությունը.
9) վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության ոլորտում խթանիչ ծրագրերի և միջոցառումների սակավությունը.

10) խմելու ջրի մատակարարման ոլորտում մատուցվող ծառայություն-ների որակի բարձրացման անհրաժեշտությունը (ջրամատակարարման տևողություն, ջրի որակ, որոշ տարածքներում օրական նվազագույն ջրամատակարարման պահանջի ցածր մակարդակ այլն).

11) ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ոլորտի անկատար օրենսդրական դաշտը.

12) կեղտաջրերի մաքրման կայանների ոչ բավարար առկայությունը.

13) ոռոգման համակարգում մեխանիկական ջրամատակարարման բարձր տոկոսը,

14) ոռոգման համակարգում ՋՕԸ-ների գործունեության ցածր արդյունավետությունը,

որի արդյունքում

- առկա է ճանապարհների որակի, դրանցով երթևեկության և ուղևորափոխադրումների անվտագության ցածր մակարդակ.
- Հայաստանի Հանրապետության բնակավայրերի տրանսպոր-տային հասանելիության մակարդակը բավարար չէ՝ ներմարզային երթուղիներով չսպասարկվող 97 համայնք չի սպասարկվում.
- ավտոմեքենաների տեխնիկական զննության գործընթացը կրում է ձևական բնույթ.
- «Զվարթնոց» միջազգային օդանավակայանից կատարվում են դեռևս սահմանափակ թվով ուղիղ չվերթներ, այն էլ՝ համեմատաբար բարձր գներով.
- Հայաստանի Հանրապետության մարզերում խմելու ջրի մատա-կարարման տևողությունը դեռևս բավարար չէ, իսկ 570 գյուղական համայնք միացված չէ կենտրոնացված ջրամատակարարման համակարգին.

- կեղտաջրերի մաքրման վերաբերյալ օրենսդրությունը լիովին չի ապահովում կեղտաջրերի հեռացման և մաքրման ռազմավարական խնդիրների կարգավորումը (բնապահպանության նյութ).
- ոռոգման ջրի սակագինը չի համապատասխանում իրական արժեքին:

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. ***Հայաստանի Հանրապետությունում համաշխարհային լավագույն չափանիշներին համապատասխան, որակյալ, բանուկ և անվտանգ կենսական ենթակառուցվածքների առկայություն և շարունակական զարգացում՝ ժամանակակից ինովացիոն գործիք-ների*** կիրառմամբ և միջազգային համագործակցության ծրագրերին ակտիվ մասնակցությամբ:

Այդ նպատակով անհրաժեշտ է՝

1) մշակել և իրականացնել Հայաստանի Հանրապետության ճանա-պարհային անվտանգության հնգամյա (2017-2021 թթ.) ծրագիր.
2) ստեղծել և ներմուծել ճանապարհային ակտիվների կառավարման նոր համակարգ՝ ճանապարհների գույքագրման, քարտե-զագրման և թվայնացման աշխատանքների իրականացման միջոցով.
3) ստեղծել և ներդնել ճանապարհաշինական ծրագրերի որակի ապահովման նոր համակարգ.
4) իրականացնել ՏՀՏ-ի հետագա արագընթաց զարգացման համալիր միջոցառումներ՝ վերացնելով առկա խոչընդոտները և գործածելով նոր խթանիչ մեխանիզմներ.

5) ապահովել «բաց երկնքի» քաղաքականության շրջանակում ավիաընկերությունների համար ազատ, մրցակցային պայմանների ստեղծում.

6) Հայաստանում նոր, ժամանակակից էլեկտրաէներգետիկական շուկային անցում՝ ներքին շուկայի կարիքներից ելնելով, Վրաստանի և Իրանի հետ առևտրի հնարավորություններն օգտագործելու համար.

7) իրագործել խմելու ջրի մատակարարման ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, ինչպես նաև ոռոգման ջրի մատակարարման ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումների փուլային և շարունակական իրականացման միջոցառումներ:

Առաջիկա քայլեր

1. ճանապարհաշինական ծրագրերի որակի հսկողության երկաստիճան մեխանիզմի մշակում և ներդրում.

2. միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների գործընթացների կանոնակարգում, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության չսպասարկվող բնակավայրերը հասանելի տրանսպորտով ապահովելու նպատակով նոր երթուղային ցանցի մշակում և ներդրում.

3. ճանապարհների գույքագրման, քարտեզագրման և թվայնացման աշխատանքների իրականացում.

4. «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շարունակություն: Նախատեսվում է ներգրավել մասնավոր ներդրողների.

5. Երևան-Սևան մայրուղում 1500 նոր ճանապարհային նշանների տեղադրում.

6. ճանապարհների մաքրման ու սպասարկման աշխատանքների առցանց հսկողության և ծախսերի արդյունավետության հսկման համակարգի ներդրում.

7. Մոսկվայի պետական ավտոճանապարհային տեխնիկական համալսարանի հետ ուսանողների փոխանակում, դասախոսական կազմի վերապատրաստում, համատեղ գիտական հետազոտությունների իրականացում.

8. «Խելացի քաղաքի» ստեղծման հայեցակարգի, ինչպես նաև անհրաժեշտ գործողությունների ցանկի և ժամկետների մշակում, որոնք կավարտվեն 2017 թվականի հուլիսին.

9. Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացմանն ու միջպետական առևտրի զարգացմանը նպաստող իրավական պայմանների ստեղծում.

10. հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգի մշակում.

11. նախատեսվում է 2017 թվականին ընտրել Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման գլխավոր կապալառուներ և մեկնարկել ծրագրի նախագծման աշխատանքները: Նախատեսվում է ծրագիրն ավարտել 2019 թվականին:

Ինչ է արվել

1. Էլեկտրոնային եղանակով լիցենզավորում

Մշակվել է էլեկտրոնային եղանակով տրանսպորտային փոխադրումների լիցենզավորման գործընթացի իրականացման ծրագիրը, որի շնորհիվ կկրճատվի գործընթացի համար պահանջվող ժամանակը:

2. Տեխնիկական զննության նոր կարգի մշակում

Մշակվել է տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության նոր կարգը, որը շուտով կընդունվի:

3. Մուլտիմոդալ բեռնափոխադրումներ

Հայաստանի տարածքում փորձնական գործարկվել է Եվրոպայից Իրան Հայաստանի տարածքով մուլտիմոդալ բեռնափոխադրումների ծրագիրը:

4. ***Հայաստան-Վրաստան սահմանին Բագրատաշենի կամրջի շինարարություն***

2016 թվականի նոյեմբերի 4-ին մեկնարկել է Հայաստան-Վրաստան սահմանին Բագրատաշենի կամրջի շինարարության ծրագիրը: Այն կշարունակի այս տարի աշնանը շահագործման հանձնված Հայաստան-Վրաստան սահմանին ժամանակակից մաքսակետի ենթակառուցվածքը, որն էապես հեշտացնում է Հայաստան-Վրաստան սահմանային առևտուրը:

5. ***Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհ***

2016 թվականի սեպտեմբերի 20-ին մեկնարկել է Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիրը:

6. ***«Ինժեներական ռեսուրս» կենտրոնի ծրագիր***

Նեյշնլ-Ինստրումենտի հետ ստորագրվել է հուշագիր «Ինժենե-րական քաղաք» ծրագրի մեկնարկի վերաբերյալ: Նախատեսվում է քաղաքը դարձնել ինժեներական ռեսուրս կենտրոն, որը կօժանդակի գործող ինժեներական կազմակերպություններին՝ մեծացնելու արտադրության ծավալները, կնպաստի այս ոլորտում նոր կազմակերպությունների ստեղծմանը:

7. ***Հայաստանի Հանրապետության ԵՄ-ի ընդհանուր ավիացիոն գոտուն անդամակցության գործընթացի մեկնարկ***

ԵՄ-ի կողմից հաստատվել է ԵՄ-ՀՀ ընդհանուր ավիացիոն գոտուն Հայաստանի Հանրապետության անդամակցելու շուրջ բանակցությունների մանդատը, 2017 թվականից սկսվում են բանակցությունները:

8. ***Քաղաքացիական ավիացիայի ոլորտում ուղևորահոսքի աճ, նոր ավիաընկերությունների մուտք և Գյումրու «Շիրակ» օդանավակայանի զարգացում***

2016 թվականի վերջին եռամսյակին, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, միայն «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի ուղևորահոսքն աճել է 28.5 տոկոսով:

Շուկա են մուտք գործել նոր ավիաընկերություններ: Բելգիական «Brussels Airlines» ավիաընկերությունը 2016 թվականի դեկտեմբերի 10-ից չվերթներ է իրականացնում Բրյուսել-Երևան-Բրյուսել երթուղով, իսկ «Պոբեդա» բյուջետային ավիաընկերությունը 2016 թվականի դեկտեմբերի 15-ից կանոնավոր փոխադրումներ է իրականացնում Մոսկվա-Գյումրի-Մոսկվա երթուղով՝ շաբաթական 3 չվերթ հաճախականությամբ:

Գյումրու «Շիրակ» օդանավակայանի զարգացմանն ուղղված քայլերի շրջանակում 2016 թվականի դեկտեմբերից «Շիրակ» օդանավակայանում աերոնավիգացիոն ծառայությունների սակագինը նվազեցվել է 50 տոկոսով:

9. Տարածաշրջանում իրացման նոր շուկաների փնտրում

Մեկնարկել են Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման և միջպետական առևտրի խթանման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության փորձագետների հետ համատեղ մշակվել է միջոցառումների ծրագիր-ժամանակացույց և համակողմանի քննարկումներ իրականացնելու նպատակով ուղարկվել է շուկայի մասնակիցներին:

10. Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցում

Իրականացվել են նախագծման աշխատանքները և մեկնարկել շինարարական աշխատանքները:

11. Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների ոլորտում Կլիմայի ներդրումային հիմնադրամի հետ համատեղ իրականացվող վերականգնվող էներգետիկայի ծրագրի ընդլայնում

Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհային ծրագրի և Արևային ներուժի գնահատման խորհրդատվական պայմանագրի շրջանակներում ներկայացվել է Մասրիկի և Դաշտադեմի Առաջին կայանի ներդրումային ծրագիրը, որը մշակվել և ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարություն, ըստ որի նախատեսվում է կառուցումը մեկնարկել 2017 թվականին:

Կարգավորվել է էլեկտրական բաշխիչ ցանցի հետ ինքնավար էներգաարտադրողների (միկրոկայանների) իրավապայմանագրային դաշտը, և քայլեր են ձեռնարկվել ֆինանսական շուկայում հատուկ և արտոնյալ պայմաններով վարկեր տրամադրելու գործում:

Մշակվել է «Շենքերի էներգաարդյունավետության բարձրացման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը նպատակ ունի կարգավորելու էներգաարդյունավետության ստանդարտների կիրառումը շինարարության ոլորտում:

12. *«Կարկառ» տեղանքում երկրաջերմային էլեկտրակայանի կառուցման ներդրումային ծրագրի կազմում ու մասնավոր ներդրողի ներգրավման նպատակով մրցույթի նախապատրաստում*

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված Երկրաջերմային հետախուզական հորատման ծրագրի շրջանակներում ավարտվել են երկու նեղ հորատանցքերի փորման համար մուտքային ճանապարհի, հորատման հարթակների և ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքները:

Մշակվել է «2016-2018 թվականների Հայաստանի Հանրապետության էներգախնայողության գործողությունների ծրագրի երկրորդ փուլին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որում նախատեսված են թիրախային միջոցառումներ և բարեփոխումներ՝ տնտեսության բոլոր ոլորտներում

էներգաարդյունավետության մակարդակի բարձրացման նպատակով:

13. *Էլեկտրաէներգիա արտադրող ընկերություններում կապիտալ նորոգման աշխատանքների գծով տնտեսում*

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի նոր էներգաբլոկի 2018 թվականին հերթական կապիտալ նորոգման աշխատանքների կատարման ընթացքում նախատեսվում է կատարել գազատուրբինի մոդեռնիզացիա, որի արդյունքում ՕԳԳ-ն կավելանա մեկ տոկոսով, էներգաբլոկի հզորությունը կավելանա 7 ՄՎՏ-ով, և կապիտալ նորոգումների պարբերականությունը 4 տարի հետո կդառնա 6 տարի, ինչպես նաև «Ջեներալ էլեկտրիկ» ընկերության հետ բանակցությունների արդյունքում շուրջ 20 տոկոսով կամ 4.5 մլն եվրոյի չափով նվազեցվել է 2018 թվականին գազատուրբինի կապիտալ վերանորոգման համար անհրաժեշտ պահեստամասերի արժեքը:

14. *Խմելու ջրի մատակարարման ոլորտում միասնական միջազգային օպերատորի հետ վարձակալության պայմանագրի կնքում*

2016 թվականի նոյեմբերի 21-ին վարձակալության պայմանագիր է կնքվել «Վեոլիա Ջուր» ընկերության հետ: Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք վարձավճարի չափը 15 տարվա համար կազմում է շուրջ 90.0 մլրդ դրամ, վարձակալի կողմից ներկայացվող պարտադիր կապիտալ աշխատանքների (ՊԿԱԾ) ծրագրի հաստատում՝ շուրջ 37.5 մլրդ դրամի չափով: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից յուրաքանչյուր տարի տրամադրվող խմելու ջրի սուբսիդիայի տնտեսում՝ 1.8 մլրդ դրամի չափով (վարկի սպասարկում՝ 3.7 մլրդ դրամ):

15. *Ոռոգման ոլորտի ջրամբարաշինություն*

Ավարտված են Վեդու ջրամբարի նախագծանախահաշվային աշխատանքները և մրցութային գործընթացը, ինչպես նաև ժամանակին մեկնարկվում է շինարարական աշխատանքների իրականացման գործընթացը, միաժամանակ ավարտին է

մոտենում Կապսի ջրամբարի ՇՄԱՍԳ ծրագրի տեխնիկական առաջադրանքի հաստատումը:

Ջրօգտագործողների ընկերությունների խոշորացման արդյունքում 37 ՋՕԸ-ներից ստեղծվելու է 14 ՋՕԸ: Գործընթացը կավարտվի 2017 թվականի մարտի 1-ին: Իրականացման փուլում են ջրի հաշվառման համակարգի ներդրման, ինչպես նաև գնումների և հաշվապահական հաշվառման կենտրոնացման գործընթացները:

2. Գույքային իրավունքների գրանցման ենթակառուցվածք

Ախտորոշում

• ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից գույքի ու դրա նկատմամբ իրավունքների, սահմանափակումների պետական գրանցման և դրանց վերաբերյալ տեղեկատվական բազայի տվյալների ճշգրտման անհրաժեշտություն և տեղեկատվության տրամադրման ոչ ամբողջական էլեկտրոնային հասանելիություն.

• կադաստրային քարտեզներում անշարժ գույքի տեղադիրքի հնարավոր սխալների առկայություն.

որի արդյունքում

• կադաստրի համակարգի տեղեկատվությունն էլեկտրոնային առցանց միջոցով հասանելի չէ.

• կադաստրային քարտեզներից տրամադրվող տեղեկատվության մեջ հնարավոր են առանձին անհամապատասխանություններ:

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. ***Ժամանակակից, ճշգրիտ, անվտանգ, էժան և արդյունավետ*** շարժական և անշարժ ***գույքի գրանցման համակարգի*** առկայություն և զարգացում**:**

1. Անշարժ գույքի կադաստրի համակարգը կենտրոնացնել մեկ շենքում և պետական բոլոր ծառայությունների համատեղ իրականացման համար ձևավորել մեկ պատուհանի սկզբունքով գործող միասնական գրասենյակներ՝ Երևանի և մարզերում տարածքային մարմինների զբաղեցրած շենքերի բազայի հիման վրա:

2. Կենտրոնացնել արխիվները, ինչը կբարձրացնի տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը:

3. Ստեղծել և ներդնել ՀՀ բազային երկրատեղեկատվական համակարգ:

   Այն կնպաստի ինչպես կադաստրային քարտեզներում հնարավոր թերությունների բացառմանը, այնպես էլ այլ մարմիններին ու բնակչությանն առկա տվյալների էլեկտրոնային հասանելիության ապահովմանը:

4. Իրականացնել ՀՀ տարածքի օդալուսանկարահանման նյութերի հիման վրա քաղաքների 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի ստեղծման աշխատանքներ:

   Այն հնարավորություն կտա ՀՀ պետական մասշտաբային շարքի թվային քարտեզների միջոցով տեղեկատվությունը տրամադրել ոչ միայն ողջ քարտեզի ծավալով, այլև առանձին շերտերի ձևով, որով էլ կկարգավորվի տեղեկատվության տրամադրման սահմանափակման խնդիրը և քաղաքացիական օգտագործման նպատակներով քարտեզների և հատակագծերի հրատարակումը:

5. Իրականացնել ՀՀ նավիգացիոն համակարգերի ներդրում:

   Այն նախատեսում է երթևեկության ուղիների օպտիմալ հաշվարկում ու ընտրություն, ինչը հնարավորություն կտա արագ և ճշգրիտ կողմնորոշվել տեղանքում, իրականացնել մոնիթորինգ (վերահսկում), դիսպետչերացում, վերլուծություն:

6. Իրականացնել ՀՀ համայնքների գյուղատնտեսական հողերի կադաստրային գնահատման աշխատանքներ:

   Տնտեսագիտական հետազոտությունների հիման վրա կատարված կադաստրային գնահատման իրականացումը թույլ կտա մեթոդապես ճիշտ հիմքերի վրա դնել գյուղատնտեսական հողատեսքերի գների սահմանումը, հողի հարկի, վարձավճարի, գրավի նորմաների որոշումը և արդյունավետ հողօգտագործման տարբեր բնույթի փոխհարաբերությունների կարգավորումը:

7. Իրականացնել հողերի խոշորացում (25 համայնք):

   Հողերի խոշորացումը կնպաստի նաև սեպաձևության վերացմանն ու մեկ տնտեսությանը պատկանող տարբեր վայրերում գտնվող հողամասերը որպես մեկ գույքային համալիր ձևավորելուն, ենթակառուցվածքների զարգացման ռացիոնալ պլանավորմանը և դրանց ծախսատարության նվազեցմանը, գյուղատնտեսական գործունեության մեջ ծախսերի կրճատմանը:

8. Իրականացնել ՀՀ տարածքում քվազիգեոիդի մոդելի ստեղծման աշխատանքներ:

   Այն կբարձրացնի ՀՀ տարածքում տեղադրված իրական ժամանակում մշտական գործող ռեֆերենց կայանների ձևափոխվող՝ տրանսֆորմացիոն պարամետրերի ճշգրտման մակարդակը, որն էլ կապահովի «ՌՈՎԵՐ» դիտարկման GPS կայաններից անմիջապես ստանալու կետի տեղադիրքի կոորդինատները WGS-84/ArmREF02/ համակարգում և կտնտեսվեն զգալի ֆինանսական միջոցներ՝ դաշտային աշխատանքների կատարման անհրաժեշտությունը վերանալու արդյունքում: Աշխատանքի արդյունքը կկիրառվի ցանկացած բնագավառում:

Ինչ է արվել

Բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի առավել բարձրացմանն ուղղված՝

1. Նոտարներին, ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1109-Ն որոշմամբ նաև չորս փակ բաժնետիրական ընկերություններին («Հայփոստ», «Արդշինբանկ», «Ամերիաբանկ», «Կոնվերսբանկ») հնարավորություն է ընձեռվել էլեկտրոնային համակարգի միջոցով իրականացնել կադաստրի սպասարկման գրասենյակի գործառույթներ: Նշված ցանկը հետագայում կարող է ընդլայնվել:

2. Կադաստրի համակարգի կողմից Ղարաբաղում, ապա ՌԴ-ի Սանկտ Պետերբուրգ քաղաքում ներդրվել է պիլոտային ծրագիր՝ Հայաստանում առկա անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու կամ իրավունքի պետական գրանցում իրականացնելու դիմումները Հայաստանից դուրս գտնվելով ներկայացնելու համար, հաջողության դեպքում նման ծրագիր կներդրվի արտերկրի հայաշատ նաև այլ բնակավայրերում:

3. Կադաստրի պետական կոմիտեի կողմից ներդրված էլեկտրոնային գնահատման համակարգը հնարավորություն է ընձեռում նաև սպասարկման գրասենյակների աշխատողների վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ իրականացնել վերահսկողություն:

4. Ներդրվել է նաև բջջային հերթագրման համակարգ, որը հնարավորություն է տալիս բջջային հեռախոս կամ պլանշետ ներբեռնված հավելվածի միջոցով ստեղծել վիրտուալ կտրոն՝ ընտրելով սպասարկման գրասենյակը, ծառայությունը, ամսաթիվը և սպասարկման ցանկալի ժամը, այնուհետև, տեսնել ստեղծած կտրոնը և ստանալ հաղորդագրություն, ինչպես նաև

հիշեցում: Համակարգը հնարավորություն է տալիս նաև ստանալ քաղաքացու համար սպասարկման ժամի օպտիմալ առաջարկ:

5. 2016 թվականի հոկտեմբերի 20-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-166-Ն և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-167-Ն օրենքները: Մասնավորապես, կատարվել են հետևյալ հիմնական փոփոխությունները՝

- անձի՝ իր գույքի և գույքային իրավունքների մասին տեղեկության անվճար տրամադրում.
- կադաստրի համակարգի կողմից մատուցվող ծառայությունները նախատեսվել է տրամադրել նաև առավել արագացված ընթացակարգով՝ միևնույն օրը, երկու ժամվա ընթացքում՝ կիրառելով արագացման համապատասխան գործակից.
- 100-ից ավելի գույքային միավորների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար սահմանվել են վճարման նվազման մեխանիզմներ.
- ամբողջ համայնքի կտրվածքով կադաստրային քարտեզների տրամադրման վճարի չափը նվազեցվել է շուրջ 10 անգամ.
- հասցեի գրանցման և գրանցված հասցեի փոփոխման գրանցման համար նախատեսված 2000 դրամի չափով վճարը հանվել է.
- առաջարկությունների հիման վրա տեղական ինքնակառավարման մարմիններին՝ իրենց գույքի ու գույքային իրավունքների մասին տեղեկատվությունը նույնպես տրամադրվելու է անվճար.
- իրավունքի գրանցման վկայականի կրկնօրինակի տրամադրման վճարի չափը 7000 դրամից դարձել է 5000 դրամ, իսկ գյուղատնտեսական նշանակության հողերինը՝ 1000 դրամ.

Օպտիմալացում

- Համակարգում 2012 թվականին ստեղծված 11 տարածքային ստորաբաժանումից ու 47 սպասարկման գրասենյակից օպտիմալացման արդյունքում ներկայում մնացել է 7 ստորաբաժանում և 41 գրասենյակ, ընդ որում դրանցից համապատասխանաբար՝ 5 ստորաբաժանում և 6 գրասենյակ վերացվել են միայն վերջերս:
- Կոմիտեի աշխատակազմի և ՊՈԱԿ-ների օպտիմալացման արդյունքում 2017 թվականի ընթացքում կապահովվի ևս 199 մլն դրամի տնտեսում (կրճատված հաստիքների թիվը՝ 60, աշխատակազմի գծով տնտեսում շուրջ 169 մլն դրամ և ՊՈԱԿ-ների մասով՝ շուրջ 30 մլն դրամ):

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՆՆԴԻ ՈԼՈՐՏ

1. Գյուղատնտեսություն

Ախտորոշում

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտը տնտեսության կարևորագույն ճյուղերից է, որն ապահովում է ՀՆԱ և զբաղվածության զգալի մաս, սակայն ոլորտում առկա են՝

1. սուբսիդավորման մեխանիզմների ցածր արդյունավետություն.
2. գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործընթացի ոչ արդյունավետ համակարգ.
3. չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի առկայություն.
4. գյուղացիական տնտեսությունների գործունեության կոոպերացիայի ցածր մակարդակ.
5. ժամանակակից ֆերմերների խավի ձևավորման խիստ ցածր տեմպեր, ձևավորմանն աջակցող կառույցների և գործընթացների անբավարարություն.
6. գյուղացիական տնտեսությունների արդյունքի հաշվառման թերի համակարգ.
7. ինտենսիվ գյուղատնտեսության և առաջադեմ տեխնոլոգիաների ոչ բավարար տարածվածություն.
8. գյուղատնտեսության մեքենայացման ցածր մակարդակ.
9. գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի բացակայություն.
10. գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարողների ժամկետանց վարկերի առկայություն:

որի արդյունքում

- ցածր արտադրողական բազմաթիվ տնտեսություններ ի վիճակի չեն ապահովել բավարար կենսամակարդակ.
- առկա է գյուղատնտեսության ներուժի ցածր իրագործման մակարդակ.
- առկա է պարենի ներմուծման օպտիմալից բարձր մակարդակ:

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. Աստիճանական անցում ***արտահանմանն ուղղված բարձր արտադրողական և վերամշակված սննդի շղթային ինտեգրված գյուղատնտեսության***՝ զբաղվածության հնարավորինս բարձր մակարդակի պայմաններում:

Ոլորտում առկա խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է՝

1. 2018-2020 թվականներին բարձրացնել գյուղատնտեսական հողատեսքերի նպատակային օգտագործման մակարդակը (ցանքատարածությունների ավելացում՝ տարեկան 3.0-3.5 հազ. հեկտարով).
2. ստեղծել համապատասխան պայմաններ 2018-2020 թվականների ընթացքում տարեկան մինչև 100 հեկտար նոր ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար.
3. ստեղծել տեղեկատվական շտեմարան չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի առկա (փաստացի) վիճակի վերաբերյալ: Իրականացնել մասնատված հողակտորների խոշորացման միջոցառումներ, մշակել հողերի խոշորացման (կոնսոլիդացման) և օգտագործման խթանման մեխանիզմներ.
4. խրախուսել ոռոգման արդյունավետ (այդ թվում՝ կաթիլային) եղանակների ներդրումը.

5. կատարելագործել հանքային պարարտանյութերի և դիզելային վառելանյութի սուբսիդավորման մեխանիզմները՝ ելակետ ունենալով դրանց նպատակային և արդյունավետ օգտագործումը, թափանցիկության ապահովումը.

6. բարձրացնել գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի մատչելիությունը.

7. ապահովել գյուղացիական տնտեսություններին վերարտադրված որակյալ սերմերի մրցակցային գներով մատակարարումը, այդ թվում, պահանջարկից ելնելով, սերմերի պահուստային ֆոնդի ձևավորման միջոցով.

8. իրականացնել գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավման հետևողական ծրագիր.

9. ստեղծել մսի իրացման և գնման գործընթացում պարտադիր սպան-դանոցային մորթի պահանջներ՝ 2017-2018 թվականներին մինչև 65 տոկոս սպանդանոցային մորթի անցման նպատակով.

10. ապահովել գյուղատնտեսական տեխնիկայի նորացման, սպա-սարկման և մատակարարման մատչելի մեխանիզմների ներդրումը.

11. բարելավել գյուղացիական տնտեսությունների խորհրդատվական և տեղեկատվական համակարգը, խթաններ ստեղծել գյուղատնտեսության մեջ գիտական արդյունքների և նորագույն տեխնոլոգիաների օգտագործումը խրախուսելու համար՝ ժամանակակից ֆերմերների ձևավորման և հաջող գործունեության ապահովման նպատակով.

12. բարելավել գյուղացիական տնտեսությունների արդյունքի հաշվառ-ման համակարգը.

13. իրականացնել գյուղատնտեսության մեջ ապահովագրական համա-կարգի փորձնական ծրագիր և ոլորտում ներդնել ամբողջական ապահովագրության անցման մեխանիզմներ.

14. գինեգործական որակյալ արտադրանք թողարկելու նպատակով հաստատել գինեգործական արտադրանքին ներկայացվող

պահանջների և թույլատրելի գինեգործական մեթոդների ու մշակումների տեխնիկական կանոնակարգը, ներդնել իզոտոպային համակարգը և դրա վերաբերյալ մակնշման պահանջը:

Ինչ է արվել

1. Սուբսիդավորման մեխանիզմների կատարելագործում

Մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների հայեցակարգը, որի դրույթների հիման վրա 2017 թվականի առաջին կիսամյակում կներկայացվի միջոցառումների ծրագիր:

Ուսումնասիրվել են գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության (սուբսիդավորման) ծրագրերը, գնահատվել են բաց կողմերը և մշակվել են դրանց վերանայման մոտեցումները:

2. Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսության ոլորտի վնասների կանխարգելում և ապահովագրական համակարգի փորձնական ներդրում

Մշակվել է բնակլիմայական աղետներից վնասների կանխարգելման հայեցակարգը և դրվել շրջանառության մեջ: Նախագիծը ներառում է նաև դրույթներ գյուղատնտեսության ապահովագրական համակարգի պիլոտային ներդրման վերաբերյալ:

3. Անտառային ոլորտի բարեփոխումներ

Մշակվել է անտառային ոլորտի բարեփոխումների հայեցակարգը՝ ուղղված անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման վիճակի բարելավմանը:

4. Մննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացում

Մշակվել է հայեցակարգ սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի և գործիքակազմի արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

5. *Չօգտագործվող գյուղատնտեսական հողերի՝ շրջանառության մեջ ներառում*

Ուսումնասիրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման հիմնական պատճառները և դրանք տարբերակվել են ըստ նշանակության:

Մշակվել են Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզերում գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ցուցադրական տնտեսությունների հիմնման նախագծերը:

6. *Գյուղատնտեսության ոլորտում բյուջետային ծրագրերի արդյունավետության բարձրացում*

Մշակվել են առաջարկություններ բյուջետային ծրագրերի ուղղությունների վերանայման և մեխանիզմների կատարելագործման վերաբերյալ (սերմնաբուծություն, տոհմաբուծություն, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում, պարարտանյութերի և դիզելային վառելանյութի սուբսիդավորում, գյուղատնտեսական տեխնիկա և այլն):

7. *Ագրարային ոլորտում տնտեսավարողների կողմից բարձրացված խնդիրների լուծում*

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աջակցության շնորհիվ լուծվել է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Աղավնաձորի համայնքի գյուղացիական տնտեսությունների խաղողի մթերումների դիմաց պարտքի վճարման խնդիրը: Նվազեցվել է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշենի և այլ հարակից համայնքների գյուղացիների խաղողի մթերումների դիմաց պարտքը:

Աջակցություն է ցուցաբերվել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքի կարտոֆիլագործներին՝ արտադրանքի իրացման գործում:

8. Օպտիմալացում

Կրճատվել է **83 հաստիք** /21-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմից/, տնտեսվել է **122.93 մլն դրամ**:

Արդյունքներ

1. ***Ավարտին է մոտեցել 2015 թվականի խաղողի մթերումների դիմաց պարտքերի մարման գործընթացը***

   Մասնավորապես, նախորդ երկու ամիսների ընթացքում կատարված մարումների արդյունքում սեպտեմբեր ամսին առկա 820 մլն ընդհանուր պարտքը նվազել է՝ հասնելով 105.6 մլն դրամի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Աղավնաձորի համայնքի խաղողագործներին նախորդ տարվա խաղողի մթերումների դիմաց վճարումներն իրականացվել են ամբողջությամբ:

2. ***Ծովագյուղում բացվել է Հայաստանում հնդկացորենի վերամշակման առաջին գործարանը***

   Համայնքի 105 բնակչի մասնակցությամբ ստեղծվել է «Ծովագյուղի հնդկացորեն» կոոպերատիվը: Յուրաքանչյուր մասնակից ներդրել է 50 հազ. դրամ և 1 հեկտար վարելահող: 105 հեկտար հողում աճեցվել է հնդկացորեն: Շրջանառության մեջ են դրվել հողեր, որոնք 25 տարի շարունակ չէին մշակվել: 1 հեկտարի հաշվով ստացվել է 1.5-1.7 տոննա հնդկացորեն:

3. ***Վերջին երկու ամսում էականորեն աճել են Իրանի Իսլամական Հանրապետություն արտահանվող մանր եղջերավոր կենդանիների մսի ծավալները***

   Հայաստանից Իրանի Իսլամական Հանրապետություն է արտահանվել շուրջ 2179.0 տոննա մանր եղջերավոր կենդանիների միս՝ 2015 թվականի ամբողջ տարվա 681.8 տոննայի դիմաց,

որից 1025 տոննան արտահանվել է սեպտեմբերի 22-ից հետո ընկած ժամանակահատվածում:

2. Սննդամթերքի անվտանգության ոլորտ

Ախտորոշում

- Հանրապետությունում սպառվող մսի ոչ սպանդանոցային ծագում և բակային մորթից ստացված մսի իրացման գործընթացներում անվտանգության ապահովման խնդիրներ և պատշաճ պետական վերահսկողության անհնարինություն կամ դժվարություններ.
- Սննդամթերքի նկատմամբ սահմանային պետական վերահսկողության ընթացակարգերում գործարար միջավայրի համար ավելորդ վարչարարություն և ռիսկային ընթացակարգեր.
- Սանիտարական և բուսասանիտարական ոլորտի (ՍԲՍ) օրենսդրական և ինստիտուցիոնալ կարողությունների պակաս և թերություններ, որոնք խոչընդոտում են արտահանման ծավալների աճին:

որի արդյունքում

- բնակչության շրջանում կարող են առաջանալ և դրսևորվել առողջության համար էական վտանգներ,
- սպառողների կողմից կարող է նախապատվություն տրվել ներմուծվող ապրանքներին,
- առաջանում են խոչընդոտներ սննդամթերքի արտահանման ժամանակ:

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. Սննդամթերքի անվտանգության ոլորտում ***արդյունավետ և նախաձեռնող պետական կարգավորման քաղաքականություն՝ հայրենական արտադրանքի խրախուսմամբ:***

Սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգում պետական վերահսկողության մեխանիզմների և գործիքակազմի թերությունների և արդյունավետության պակասի լրացման արդյունքում կիրականացվեն՝

- ՍԱՊԾ-ի կառուցվածքային փոփոխություններ և տեղի կունենա լիազորությունների վերաբաշխում՝ ապակենտրոնացնելով և ներդնելով որոշումների կայացման աստիճանական ընթացակարգ.
- գործիքակազմի փոփոխության արդյունքում կիրականացվի վերահսկողության սկզբունքների վերանայում՝ ներդնելով խորհրդատվություն- դիտարկում-ստուգում ընթացակարգը.
- սննդի անվտանգության ոլորտում արձանագրված թերությունների, այդ թվում՝ թունավորումներին արագ արձագանքման թիմի ձևավորում.
- տեսչական գործընթացների թվայնացում, այդ թվում՝ չափիչ սարքերի կիրառման միջոցով.
- սպանդանոցային ծագման մսի իրացման համակարգի ներդրում.
- ոլորտում որոշ ապրանքատեսակների արտահանման խոչնդոտների վերացում և արտահանվող ապրանքատեսականու ընդլայնում:

Առաջիկա քայլեր

1. ***2017 թվականից սկսած մսի իրացման և գնման գործընթացում պարտադիր սպանդանոցային մորթի փուլային անցում: Մինչև 2021 թվականն ամբողջովին սպանդանոցային մորթի անցնելու նպատակով նախատեսվում է՝***

- սպանդանոցային ծագման մսի իրացման հնարավորությունների ստեղծում.
- սպանդանոցային պարտադիր մորթի պայմանների և ժամկետների մասին հնարավոր բոլոր միջոցներով իրազեկում, ոլորտային քննարկումների կազմակերպում.
- սպանդանոցային պարտադիր մորթի անցման ժամկետի սահմանում՝ առաջարկվում է 2017 թվականի օգոստոսի 1-ը.
- սպանդանոցներում կենդանիների վարակիչ հիվանդություններով հիվանդ կենդանիների սանիտարական մորթի ապահովում.
- նոր սպանդանոցների պարտադիր հիմնում ՀՀ Գեղարքունիքի, Տավուշի, Արմավիրի, Շիրակի մարզերում, իսկ մնացած մարզերում՝ ըստ պահանջի.

2. ***Նախատեսվում է սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի և գործիքակազմի արդյունավետության բարձրացման հայեցակարգի մշակում, այդ թվում՝***

- իրականացնել ՀՀ գյուղատնտեսության նախարարության ՍԱՊԾ-ի լաբորատոր կարողությունների հզորացում, մասնագետների վերապատրաստում.
- տնտեսվարողների մոտ վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (ՎՎՀԿԿ) համակարգի աստիճանական ներդրման ծրագրերի իրականացում.
- ուսումնական հաստատություններում սննդամթերքի անվտանգության մասնագետների ուսուցման մակարդակի բարձրացում.
- ռիսկերի գնահատման հիման վրա ստուգումների անցկացման, օպերատիվ արձագանքման և այլ ընթացակարգերի, նորմերի ու կանոնների մշակում և կիրարկում:

3. ***Արտահանման ծավալների խթանման և ծավալների մեծացման նպատակով սանիտարական և***

բուսասանիտարական ոլորտում (ՍԲՍ) առկա խոչնդոտների վերացման նպատակով նախատեսվում է՝

- ԵՏՄ անդամ պետությունների լիազոր մարմինների և ԵՏՀ-ի հետ համագործակցությամբ ՀՀ տնտեսվարողների համար բացառությունների և հեշտացված ընթացակարգերի ներկայացում.
- ԵՄ-ՀՀ փոխգործակցության համաձայնագրով սանիտարական և բուսասանիտարական ոլորտի բանակցությունների ավարտ.
- ՀՀ-ԱՄՆ առևտրային ընթացակարգերի պարզեցում.
- ՀՀ-Իրան համագործակցության շրջանակում բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի ոլորտում փոխըմբռնման հուշագրի կնքում.
- ՀՀ-Չինաստան փոխգործակցության համատեքստում սանիտարական և բուսասանիտարական ոլորտի համագործակցության ընդլայնում.
- ԵՏՄ անդամ երկրների և մի շարք (Սինգապուր, Հնդկաստան, Վիետնամ, ԻԻՀ, ՉԺՀ) երրորդ երկրների հետ ազատ առևտրի համաձայնագրերի և հուշագրերի քննարկում:

4. ***Ծառայության կողմից իրականացվող պետական վերահսկողության արդյունավետության և գործիքակազմի վերանայման և կատարելագործման ուղղությամբ նախատեսվում է՝***

- վերանայել «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքով սահմանված «դիտարկում» գործիքը՝ սահմանելով, որ դիտարկումը վերաբերի ոչ միայն մակնշմանը, այլև սննդամթերքի բոլոր տեսակների պահման պայմաններին և շրջանառության փուլերում հիգիենիկ պահանջներին.
- վերանայել ծառայության «հսկիչ գնում» գործիքը, որը թույլ կտա հսկիչ գնմամբ իրականացնել ամբողջական, այդ թվում՝ նաև

անվտանգության ցուցանիշների մասով լաբորատոր փորձաքննություններ ոչ միայն սննդամթերքի բոլոր տեսակների, այլև սննդամթերքի հետ շփվող նյութերի, սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների նկատմամբ.

- սննդի տրանսպորտային փոխադրամիջոցների համար սանի-տարական անձնագրերի ներդրման աստիճանական համակարգի կիրառում:
- հաճախորդների սպասարկման կենտրոնի ստեղծում:

5. ***Սահմանային պետական վերահսկողության ընթացակարգերի պարզեցման ուղղությամբ նախատեսվում է՝***

- «Մեկ պատուհան» սկզբունքի կիրառման շրջանակում սահմանային պետական վերահսկողության պարզեցում, «Մեկ կանգառ», «Մեկ պատուհան» էլեկտրոնային համակարգի ներդրում.
- հերթափոխային 24-ժամյա սահմանային վերահսկողության ապահովում՝ ծառայության աշխատակազմի սահմանային հսկիչ կետերում մասնագետ-տեսուչների թվի համալրում՝ չորս հերթափոխով աշխատելու համար.
- ներմուծվող բեռների նկատմամբ սահմանային վերահսկողության մեթոդաբանության վերանայում և այդ համատեքստում նմուշառման և լաբորատոր փորձաքննությունների նոր մոտեցումներ.
- ծառայության վերահսկողական գործունեության թվայնացում, որի համատեքստում արդեն ստեղծված է «Լամբրոն» համակարգը՝ գործունեության ոլորտային և տարբեր ուղղվածության տվյալների շտեմարանների ձևավորմամբ: Ընթացքի մեջ են համակարգի ներդրմանն ուղղված աշխա-տանքները, կիրականացվեն նաև «Լամբրոն» համակարգի կիրարկման վերաբերյալ ծառայության աշխատողների ուսուցումներ:

Ինչ է արվել

1. ***Իրականացվել է ՀՀ քաղաքացու կողմից առաջնային սպառման սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի հետևողական վերահսկողություն:***
2. ***Վերահսկողության գործընթացում ներդրվել է խորհրդատվություն- դիտարկում-ստուգում ընթացակարգը:***
3. ***Վերաբաշխվել են լիազորությունները՝ ապակենտրոնացնելով դրանք և ներդնելով որոշումների կայացման ասպիճանական ընթացակարգ:***
4. ***Ձևավորվել է արագ արձագանքման խումբ՝ թունավորումների և դիմում բողոքների համար:***
5. ***Թվայնացվել են նմուշառման ակտերը:***
6. ***Իրականացվել է 2541 տնտեսվարողի ուսումնասիրություն և խորհրդատվության տրամադրում:***

   - 2016 թվականի նոյեմբերի 11-ից մինչև դեկտեմբերի 17-ը իրականացվել է 92 տնտեսավարող սուբյեկտի դիտարկում, խախտումներ են արձանագրվել 47-ի մոտ: Այդ թվում՝ 20 -ում կասեցվել է արտադրանքի իրացումը, և սննդամթերքը հետ է կանչվել ու ոչնչացվել:
   - 50 կաթ-կաթնամթերք արտադրողներից 40-ում արձանագրվել են խախտումներ՝ հումքի և պատրաստի արտադրանքի որակին և անվտանգությանը, սննդամթերքի պահման, մակնշման և հիգիենային ներկայացվող պահանջներում: 20 ընկերություն ժամանակավոր դադարեցրել է իր գործունեությունը:
   - Միս-մսամթերք արտադրող 9-ը տնտեսվարողներից 2-ում արձանագրվել են անվտանգության ցուցանիշով շեղումներ, արտադրանքը շուկայից հետ է կանչվել ու ոչնչացվել:

- Երևան քաղաքում իրականացվել են մսի վաճառքի կետերի մշտադիտարկումներ, որի արդյունքում արձանագրվել են վաճառքի պահանջների և անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգի խախտման դեպքեր:
- Դիտարկվել է 25 հանրային սննդի կազմակերպություն, այդ թվում՝ նախադպրոցական և դպրոցական հաստատություններ, երեխաների սոց-հոգածության ու տուն-ինտերնատներ, գիշերօթիկներ: Խախտումներ հայտնաբերվել են 1-ում:
- Դիտարկվել է 7 իրացման կետ, 2-ում հայտաբերվել են խախտումներ:
- Դիտարկվել է հրուշակեղենի 1 արտադրություն՝ շեղումով ապրանքների իրացումը կասեցվել և խոտանվել է:
- Ստուգումներ են իրականացվել 16 կազմակերպությունում, որից՝ 3-ը մսամթերքի արտադրությունում, 12-ը՝ ալկոհոլային խմիչքների արտադրությունում, 1-ը՝ իրացման ցանցում:

7. ***ՀՀ օրենսդրական փոփոխությունների համատեքստում՝ մշակված են և շահագրգիռ պետական մարմինների քննարկմանն են ներկայացվել հետևյալ իրավական ակտերի նախագծերը՝***

- «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը.
- «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը.
- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը.
- «ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 31-ի N 426-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը.
- «ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1499-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը.

- «Սպանդանոցային ծագման մսի իրացման ոլորտները՝ ըստ առաջնահերթությունների և ժամկետների սահմանող» ՀՀ կառավարության որոշման նախագիծը.

8. ***Վերանայվել է կենդանիների սպանդից գոյացած մսեղիքի անասնաբուժական դրոշմման կարգը, և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Կենդանիների սպանդից գոյացած մսեղիքի անասնաբուժական դրոշմման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 666-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը.***

9. ***Մշակվել է «Մննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի նշանակման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ներկայացված է ՀՀ կառավարության քննարկմանը***:

Օպտիմալացում

1. ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված ոլորտային միջոցառումների իրականացման և համակարգի հետագա զարգացման նպատակով կիրականացվի ծառայության համակարգում օպտիմալացում՝ 2017 թվականի ընթացքում կկրճատվի ընդհանուր առմամբ 40 հաստիք՝ ծառայության կազմում գործող ՊՈԱԿ-ների մասով: Ծառայության համակարգի օպտիմալացման շրջանակում 2017 թ. կկրճատվի 40 հաստիք՝ ՊՈԱԿ-ների մասով:

2. ՍԱՊԾ-ի մասով նախատեսվում է հաստիքների ավելացում: Արդյունքում կտնտեսվի տարեկան կտրվածքով շուրջ 40 մլն դրամ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Ախտորոշում

1. Ոլորտիօրենսդրության անբավարար իրավակիրարկման պատճառով համակարգային կոռուպցիոն ռիսկերի առկայություն,

2. Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների կառավարման էկոհամակարգային մոտեցման, բնական կապիտալի և էկոհամակարգային ծառայությունների տնտեսական (արժեքային) գնահատման մեխանիզմների բացակայություն,

3. Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պետական մոնիթորինգի, տեղեկատվական և կառավարման միասնական համակարգի բացակայություն,

4. Բնապահպանական և բնօգտագործման վճարներից գոյացող ֆինասական միջոցների օգտագործման ցածր հասցեականություն,

5. Բնապահպանական թույլտվությունների միասնական համակարգի բացակայություն**,**

6. Բնապահպանական պետական վերահսկողության համակարգի գործունեության ցածր արդյունավետություն.

7. Բնական ռեսուրսների կառավարման ցածր արդյունավետություն,

8. Պետություն-մասնավոր հատված համագործակցության (կոնցեսիոն կառավարման, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ձևավորման) ցածր մակարդակ,

9. Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման համակարգերի անարդյունավետություն:

որի արդյունքում

• Լիարժեք չեն ապահովվում ՀՀ քաղաքացիների ՀՀ Սահմանադրությամբ վերապահված իրավունքները շրջակա միջավայրի պահպանության ու բարելավան մասով:

• Բնապահպանական թույլտվությունների տրամադրման համակարգի բարդացվածության և համակարգված չլինելու պատճառով ՀՀ քաղաքացիները և գործարարները հաճախ խուսափում են ձեռնարկատիրական գործունեությունից, ձևավորում են կոռուպցիոն կամ ստվերային ռիսկեր :

• Բնական ռեսուրսների ոչ արդյունավետ կառավարումը չի նպաստում ՀՀ տնտեսական աճին, ՀՀ քաղաքացիների բարեկեցության բարձրացմանը:

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. Շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը խթանող քաղաքականության և ***բնական պաշարների ողջամիտ օգտագործման միջոցով իրական կայուն տնտեսական աճի ապահովում***:

Ոլորտում առկա խնդիրների լուծման ուղությամբ, նախատեսվում է.

1. Ամբողջացնել Էկոլոգիականքաղաքականության օրենսդրություն.
2. Մշակել կանաչ տնտեսության սկզբունքների ներդրման հայեցակարգ.
3. Ձևավորել բնական ռեսուրսների բանական օգտագործման և շրջակա միջավայրի միասնական կառավարման համակարգ Պարզեցնել նախարարության կողմից մատուցվող ծառայությունների ընթացակարգերը, ընդլայնել Էլեկտրոնային եղանակով ծառայությունների տրամադրման մեխանիզմները, բարձրացնել մատուցվող ծառայություններիթափանցիկությունը, ներդնել աշխատակիցների խրախուսման և մասնագիտական

վերապատրասման համակարգեր, գործադրել լիազորություն-պատասխանատվություն ամբողջական համակարգը.

4. Ապահովել բնապահպանության բնագավառում տրամադրվող թույլտվությունների և լիցենզիաների մեկ միասնական համակարգի, «մեկ պատուհանի» սկզբունքով և էլեկտրոնային եղանակով տրամադրումը.

5. Արդյունավետության բարձացման նպատակով ինստիտուցիոնալ բարեփոխումների ենթարկել բնապահպանական պետական վերահսկողության համակարգը: Միավորել շրջակա միջավայրի մշտադիտարկումներ իրականացնող կազմակերպությունները՝ բնապահպանության բնագավառի լիազորված պետական մարմնի կառավարման համակարգում.

6. Լրամշակել և ամբողջացնել ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման գործընթացը կանոնակարգող օրենսդրությունը, ամբողջացնել ջրավազանային տարածքների կառավարման պլանները.

7. Ջրային ռեսուրսների ավտոմատ կառավարման համակարգերի ներդրման գործում ներգրավել մասնավոր հատվածին, Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսություններում ներդնել ջրային ռեսուրսների ավտոմատ կառավարման, էներգախնայող և ջրախնայող համակարգեր.

8. Ստեղծել մասնավոր, համայնքային և պետական մասնակցությամբ նոր ազգային պարկեր, վերանայել բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման համակարգերը, ամբողջացնել կառավարման պլանները, զարգացնել պահպանման մեխանիզմները և կարողությունները՝ ներառյալ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ.

9. Մասնավոր ներդրումների, միջազգային և տեղական դրամաշնորհային ծրագրերի համատեղմամբ ձևավորել բնութան հուշարձանների անձնագրավորման, պահպանման և էկոտուրիզմում ներգրավման համակարգ:

Ինչ է արվել

1. ***Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների միասնական պետական մոնիթորինգի և տեղեկատվական համակարգի ձևավորում***

   Բնապահպանության բնագավառի լիազորված պետական մարմնի կառավարման համակարգում իրականացվել է շրջակա միջավայրի մշտադիտարկումներ իրականացնող կազմակերպությունների միավորման գործընթաց՝ **4 ՊՈԱԿ-ի միավորմամբ ստեղծվել է 1-ը:** Միասնական համակարգի **վերջնական ձևավորումը լուծված կլինի 2017 թ. 4-րդ եռամսյակում:**

2. ***Բնապահպանական թույլտվությունների միասնական համակարգի ձևավորում***

   ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել որոշման նախագիծ՝ բնապահպանության բնագավառում տրամադրվող թույլտվությունների և լիցենզիաների մեկ միասնական համակարգի («մեկ պատուհանի» ակզբունքով) և էլեկտրոնային եղանակով թույլտվությունների տրամադրման ապահովման վերաբերյալ: Վերջնական ձևավորումը լուծված կլինի 2017 թվականի ընթացքում:

3. ***Ջրավազանային տարածքների կառավարման պլանների հաստատում***

   ՀՀ կառավարության աշխատակազմ հաստատման է ներկայացվել Ախուրյանի ջրավազանային տարածքի կառավարման պլանը:

4. ***Բնապահպանության ոլորտում պետություն-մասնավոր հատված համագործակցություն***

   2016թ. դեկտեմբերի 12-ին ստորագրվել է Ջերմուկ ազգային պարկի ստեղծման հուշագիրը Լիդիան Արմենիա ընկերության հետ (5.7մլն եվրո)

Օպտիմալացում

- նախարարության աշխատակազմի 37 հաստիք կրճատվելու է՝ ապահովելով տարեկան առնվազն 80.0 մլն դրամի տնտեսում
- նախարարության համակարգում կրճատվել է 22 տրանսպորտային միջոց.
- համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների թվաքանակը կրճատվել է 3 միավորով և 21 հաստիքային միավորով, որի արդյունքում տնտեսվելու է տարեկան կտրվածքով 20.0 մլն դրամ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Ախտորոշում

Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգը ունի՝

- Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում ստացող շահառուների շրջանակի, նրանց մատուցվող բժշկական ծառայությունների ծավալի և բյուջեից հատկացվող միջոցների միջև անհամապատասխանություն,
- Հատկացվող բյուջետային միջոցների և ստացված արդյունքների անհամաչափություն,
- ՀՀ տարածքում առողջապահական ենթակառուցվածքների և մասնագիտական ներուժի անհամաչափ բաշխում,
- Որակյալ բժշկական օգնության և սպասարկման միասնական ստանդարտների բացակայություն,
- Առողջապահական ծառայությունների նպատակայնության, հետագծելիության ապահովման, հատկացվող ֆինանսական միջոցների վերահսկման, որակի կառավարման գործուն մեխանիզմների արդյունավետության ցածր մակարդակ՝ պայմանավորված ոլորտում միասնական էլեկտրոնային համակարգի բացակայությամբ,
- Նույն բժշկական ծառայության համար բազմակի գներով պայմանավորված կոռուպցիոն ռիսկեր, բարձր ստվերայնություն առողջապահական հաստատություններում:

որի արդյունքում

- ՀՀ քաղաքացին հաճախ ստիպված է հավելյալ վճարել պետության կողմից անվճար սահմանված ծառայությունների համար,

- ՀՀ առավել խոցելի խավերի համար հաճախ չի պահպանվում սոցիալական արդարության սկզբունքը,
- ՀՀ քաղաքացին շատ դեպքերում չի կարողանում ստանալ որակյալ, միջազգային ստանդարտներին համապատասխան բուժօգնություն:

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. Ներկայումս գործող բարձր ստվերայնությամբ, ոչ շուկայական մեխանիզմներով իրականացվող գնման համակարգի ցանցում ***նպատակայնության, հատկացվող ֆինանսական միջոցների վերահսկման և որակի կառավարման գործուն մեխանիզմների*** վրա հիմնված առողջապահական համակարգի ձևավորում:

Ելնելով նշված ախտորոշման արդյունքներից՝ ՀՀ առողջապահական համակարգի արդյունավետությունը և ծառայությունների որակը բարձրացնելու համար 2017-2019 թվականներին անհրաժեշտ է հետևյալ քայլերի փուլային իրականացում՝

1. Վերանայել ներկայումս պետության կողմից երաշխավորված կարգով բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող օրենսդրությունը: Հիմնական առողջապահական ծրագրերով անվճար բժշկական օգնության շահառուների շրջանակը որոշելիս հիմքում դնել անապահովության հանգամանքը և սոցիալական արդարության սկզբունքը:

2. Վերանայել պետական պատվերի շրջանակում մատուցվող բժշկական ծառայությունների գները՝ դրանք աստիճանաբար համապատասխանեցնելով ներկայումս գործող շուկայական գներին՝ հիմքում ունենալով մեծածախ գին գաղափարը:

3. Ներկայումս գործող՝ բյուջետային միջոցների բուժհաստատությունների միջև փաստացի բաշխումից աստիճանաբար անցում կատարել առողջապահական ծառայությունների գնման մոդելի՝ միաժամանակ բժշկական ծառայությունների ինքնարժեքի հաշվարկման և գնային քաղաքականության մշակման

նպատակով ուժեղացնելով կիրառվող մեթոդաբանական և վերլուծական մոտեցումները:

4. Ստեղծել հատկացված պետական միջոցների նպատակային օգտագործումը և դրանց հիմնավորվածությունը մշտադիտարկման ռեժիմով վերահսկող որակյալ բժիշկ փորձագետներով համալրված ստորաբաժանում, միևնույն ժամանակ միջոցներ ձեռք առնել Պետական առողջապահական գործակալության (ՊԱԳ) արդյունավետության բարձրացման նպատակով, այդ թվում՝ որոշ գործառույթներ ամբողջությամբ կամ մասնակի պատվիրակելով մասնագիտացված կազմակերպությունների:

5. Տեղայնացնել առավել առաջադիմական համարվող եվրոպական և ամերիկյան բժշկական ասոցիացիաների վավերացված գործելակարգերը և դրանց հիման վրա ներդնել պացիենտների վարման կլինիկական ուղեցույցներ և պարտադիր կատարման գործելակարգեր:

6. Իրականացնել արտահիվանդանոցային և հիվանդանոցային հատվածների գործառույթների հստակ տարանջատում և ներդնել բժշկական անձնակազմի մասնագիտական գործունեության ստանդարտների և գործունեության արդյունքներով խրախուսական մեխանիզմներ՝ զուգահեռ անցկացնելով հետազոտություններ՝ ուղղված պետական ամբուլատոր հաստատություններում առկա թերությունների և խնդիրների բացահայտմանը՝ նպատակ ունենալով մշակել կադրային, գույքային և մասնագիտական բարեփոխումների նախագիծ:

Ինչ է արվել

1. Բյուջեի կողմից հատկացվող գումարների ծախսման արդյունավետության բարձրացում

Թվով 12 դժվարամատչելի ծառայությունների գները 30%-ով կրճատվել են՝ բերելով դրանք շուկայում առկա համադրելի գների

մակարդակի: Համապատասխանաբար նշված ծառայությունները հասանելի կլինեն 30%-ով ավելի շահառուի:

Կատարվել են ակտուարական վերլուծություններ, որի արդյունքում գնահատվել է բժշկական հիմնական ծառայությունների գծով ՀՀ ամբողջ բնակչությանը ապահովելու համար անհրաժեշտ ծախսերի մակարդակը:

2. ***Միասնական ստանդարտների ներդրում***

Ստեղծվել է 50 աշխատանքային մասնագիտացված խումբ և առանձին կոորդինացնող խումբ: Արդեն իսկ թարգմանված է մոտավորապես 100 կլինիկական ուղեցույց և գործելակարգ:

3. ***Առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային համակարգի ներդրում***

Սկսվել է Համաշխարհային բանկի կողմից մշակված միասնական էլ – առողջապահական (e-health) համակարգի ներդրման ծրագիրը՝ այս փուլում մշակելով ներդրման ճանապարհային քարտեզը, հստակեցնելով շահառուների շրջանակը, պատասխանատու անձանց և աշխատանքների հանձնման ժամկետները:

E-health համակարգը միացվել է ոստիկանության բնակչության պետական ռեգիստրին:

E-health համակարգին ինտեգրվել է «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն, ինչն ապահովելու է համակարգում ՀՀ-ում գրանցված դեղերի ցանկերի առցանց թարմացումը:

Պատրաստվել են էլ-առողջապահական համակարգում պետական պատվերի շրջանակում իրականացվող գործառույթները նկարագրող ուսումնական տեսանյութեր (https://www.youtube.com/channel/UC3vABSnTZQWnf5VRNunKbIQ):

Ստացվել և E-health համակարգում ներմուծվել է պետական պատվեր իրականացնող 470 (ողջ ծավալի 95%) բժշկական հաստատությունների բժշկական և սպասարկող անձնակազմի

վերաբերյալ տեղեկատվությունը ծրագրային իրավասությունների տրամադրման և բժշկական անձնակազմի ռեգիստրի ստեղծման նպատակով (համակարգում արդեն իսկ մուտքագրված է ավելի քան 20000 օգտատիրոջ տվյալ):

4. Ենթակա կառույցների ֆինանսավորման մեխանիզմի պարզեցում

Իրականացվել է ոլորտում գործող կազմակերպությունների մի մասի գործառույթների, գործունեության արդյունքների, հատկացվող միջոցների, կառուցվածքի և կադրերի համալիր վերլուծություն, որի արդյունքում ՀՀ կառավարություն են ներկացվել արդյունավետության բարձրացման առաջարկություններ: Մասնավորապես՝

- ներկայացվել է ՊԱԳ-ի կառուցվածքում փոփոխությունների վերաբերյալ ՀՀ կառավարության նախագիծ, ինչի ընդունման արդյունքում հիմքեր կստեղծվեն կառույցի առջև դրված խնդիրներն առավել արդյունավետ իրագործելու համար,
- ներկայացվել է ՀՀ առողջապահության նախարարության կենտրոնական ապարատի կառուցվածքում փոփոխությունների վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը,
- ներկայացվել է Առողջապական պետական տեսչության նոր կառուցվածքը,
- իրականացվել է «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի միավորումով և որոշ մարզային ենթակառուցվածքների լուծարումով օպտիմիզացիայի ծրագիր, որի արդյունքում 22 շինություններ կփոխանցվեն պետական գույքի կառավարման վարչությանը,
- իրականացվել է 4 հիմնարկի լուծարում, որից երկուսը միավորման ճանապարհով, երկուսը՝ լուծարման և գործառույթներն այլ կազմակերպությունների միջև բաշխման ճանապարհով:

- Արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերի արդյունքում ՀՀ առողջապահության նախարարության կենտրոնական ապարատում և նախարարության ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ներում 2017 թվականին ենթադրվում է ունենալ 1440 հաստիքի կրճատում (որից՝ 330 թափուր) և մոտավորապես 702 միլիոն դրամի խնայողություն:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Ախտորոշում

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության համակարգում արձանագրվել են հետևյալ խնդիրները՝

- նախադպրոցական կրթությունում ընդգրկվածության ցածր մակարդակ.
- հանրակրթական ուսումնական հաստատությունների հանրային հաշվետվողականության բացակայություն.
- գործող ուսումնական հաստատությունների ֆինանսավորման համակարգը չի ապահովում արդյունավետ լուծումներ դրված խնդիրների համար.
- ուսումնական հաստատությունների ֆինանսավորման և առկա խնդիրների միջև անհամապատասխանություն.
- կրթության բովանդակությունը լիովին չի համապատասխանում հասարակության զարգացման արդյունքում ծառացող պահանջներին.
- գիտական ենթակառուցվածքների և գիտության զարգացման համար անհրաժեշտ արդի պահանջների միջև անհամապատասխանություն.
- ճարտարագիտական և կիրառական հետազոտությունների ընդհանուր ծավալը շատ փոքր է ֆինանսավորվող գիտական հետազոտություններում.

որի արդյունքում

- կրթական ծրագրերի անբավարար մակարդակ և առկա պահանջների հետ անհամապատասխանություն.

- դասագրքերի բովանդակության չափանիշների և կազմման թերի մեթոդաբանություն.
- կրթական գործընթացում ինովացիոն, տեխնոլոգիական կրթական մեթոդների կիրառման փոքր ծավալներ.
- գյուղական դպրոցներում որակյալ ուսուցում ապահովելու համար առկա մանկավարժական և նյութատեխնիկական միջոցների անբավարարություն.
- ԲՈՒՀ-գիտահետազոտական կազմակերպություն-աշխատաշուկա ոչ բավարար համագործակցություն.
- միևնույն թեմատիկային (ոլորտին) վերաբերող, կրկնվող հետազոտություններ իրականացնող գիտահետազոտական կազմակերպությունների առկայություն:

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. Ապահովել ինտելեկտուալ Հայաստանի հիմնաքար հանդիսացող, ***ժամանակակից հմտություններով և քննադատական մտածելակերպով օժտված շրջանավարտներ*** տվող կրթագիտական համակարգ:

Ելնելով նշված հիմնախնդիրներից՝ անհրաժեշտ է հետևյալ միջոցառումների հետևողական իրականացումը՝

1. Հասկացությունները: Հիմնվելով կատարված վերլուծությունների վրա մշակել ֆինանսավորման նոր մեխանիզմ «Միջին բեռնվածության դպրոց» և «Թերբեռնված դպրոց» կատեգորիաների դպրոցների համար:
2. Ստեղծել օրենսդրական նախադրյալներ բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարեփոխման նպատակով անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման, ինչպես նաև բարձրագույն կրթության ֆինանսական նոր մեխանիզմների ներդրման համար:

Իրականացնել բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարեփոխումներ՝ կապելով ֆինանսավորումը յուրաքանչյուր առարկայի, ոչ թե սեմեստրի հետ, ձևավորել ուսանողների ներհանրապետական և արտերկրյա շարժունակության նախադրյալներ՝ քննարկելով ուսանողների ոչ թե խմբային, այլ անհատական առաջադիմության մոդելը:

3. Ընդլայնել նախադպրոցական ծառայությունների ցանցը և ուսումնասիրել նախակրթարանները 12-ամյա կրթության համակարգում (1+11) ներառելու արդյունավետությունը:

4. Ապահովել առցանց դասընթացների, տեսադասերի և պարապմունքների մշակումը, ներդրումն ու հասանելիությունը ՀՀ գյուղական համայնքներում:

5. Ձևավորել ազգային կրթակարգ՝ հանրակրթական ծրագրերում ապահովելով օտար լեզուների, բնագիտական առարկաների և մաթեմատիկական առարկաների դասավանդման ծավալների ավելացում:

6. Առարկայական ծրագրերը համապատասխանեցնել արդի պահանջներին, սահմանել դասագրքերի նոր չափորոշիչներ և վերանայել դասագրքերի բովանդակությունը:

7. Իրականացնել ԲՈՒՀ-ական համակարգի կառուցվածքային բարեփոխումներ և ձևավորել ինժեներատեխնիկական ու բնագիտական կլաստերներ:

8. Մշակել և ընդունել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ նոր օրենք, որը հնարավորություն կտա ոլորտում ներգրավված իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխհարաբերությունները համապատասխանեցնել արդի պահանջներին:

9. Գիտության բնագավառում իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ և օպտիմալացում: Արդյունքում հնարավոր կլինի նույնատիպ հետազոտություններ իրականացնող կազմակերպությունները միավորել, որը կունենա հետազոտողների բավարար քանակ, արդյունավետորեն կօգտագործի գիտական ու

գիտատեխնիկական ենթակառուցվածքները, կհանգեցնի օժանդակ անձնակազմի թվի կրճատմանը:

10. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերի մեջ ավելացնել կիրառական հետազոտությունների մասնաբաժինը, իսկ պայմանագրային (թեմատիկ) թեմաները և նպատակային ծրագրերը հիմնականում ուղղորդել կիրառական և երկակի նշանակություն ունեցող հետազոտությունների իրականացմանը:

Ինչ է արվել

1. Օրենսդրական նախաձեռնություններ

ՀՀ կառավարություն է ներկայացվել «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

2. Հանրակրթական հիմնարկների թափանցելիության ապահովում

Ստեղծվել է ՀՀ հանրակրթական դպրոցների էլեկտրոնային քարտեզ և տվյալների շտեմարան, որը հասանելի է համացանցում:

3. Գյուղական համայնքներում կրթության որակի ապահովում

40 գյուղական դպրոց փոխկապակցվել է առաջավոր փորձ ունեցող դպրոցների հետ, որոնք ստանձնել են տեսադասերի իրականացման և մեթոդական օժանդակության պարտավորությունը: Փորձնական կարգով իրականացվել են հեռադասեր գյուղական դպրոցների համար:

4. Նոր կրթակարգ

Ավարտվել են նոր կրթակարգի նախնական նախագծի ստեղծման աշխատանքները:

Ներկայացնել է հանրակրթական դպրոցներում ֆինանսական և տնտեսագիտական կրթության ներդրման ժամանակացույցը:

5. Դպրոցական ծրագրի բեռնաթափում

Բեռնաթափվել է ավարտական դասարանի ծրագիրը. Շրջանավարտները հնարավորություն են ստացել առաջին կիսամյակի ավարտին հանձնել քննությունները և կենտրոնանալ ընտրված առարկաների վրա:

6. Նոր կրթական ծրագիր ավագ դպրոցում

Մեկնարկել է միջազգայնորեն ճանաչված հայալեզու «Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագրի ներդրումն ավագ դպրոցի բաղադրիչ ունեցող մարզային պետական կրթական հաստատություններում:

7. Օպտիմալացում

Կրթության և գիտության նախարարության աշխատակազմի օպտիմալացման արդյունքում կրճատվել է 66 հաստիք և 2017 թվականին պետական բյուջեում տնտեսումը կկազմի մոտ 141 միլիոն դրամ:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏ

Ախտորոշում

- մարզերի մշակութային անհամաչափ զարգացում.
- աշխարհասփյուռ հայության մշակութային ներուժի միասնական դրսևորումների գրեթե բացակայություն.
- մշակույթի ոլորտի զարգացման տնտեսական բաղադրիչի ցածր արդյունավետություն.
- հայ մշակույթի հանրահռչակման, արտասահմանում հայ դասական և ժամանակակից արվեստի տարածման հետ կապված խնդիրներ.
- մշակութային ծրագրերի և հեռուստահաղորդաշարերի ցուցադրման սակավություն.
- օտարերկրյա պետություններում հայկական պատմամշակութային հուշարձանների հաշվառման, վավերագրման և առկա տեղեկատվական շտեմարանի համալրման խնդիրներ.
- այլ մշակույթների ցածր ներկայացվածություն Հայաստանում,
- մշակութային կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման գործընթացներում ժամանակակից տեղեկատվական և տեխնիկական միջոցների ոչ արդյունավետ օգտագործում,

որի արդյունքում

- մարզերի բնակչությանը հասանելի չեն մշակութային ծառայությունները, երբ մայրաքաղաքում դրանք բազմազան են և հասանելի, լիարժեք չեն գործում մարզային մշակութային կազմակերպություններն ու ենթակառուցվածքները.
- լիարժեք չի դրսևորվում աշխարհասփյուռ հայության մշակութային ներուժը.
- ցածր են մշակութային արտադրանքից, ծառայություններից, գույքի օգտագործումից ստացվող եկամուտները, ցածր է

մշակույթի ոլորտում կառավարման ժամանակակից մոդելների կիրառելիությունը.

- հայկական պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրման, պահպանության, հաշվառման ցածր աստիճանը վտանգում է օտարերկրյա պետություններում հայկական ժանգությունը.
- հայրենական և արտասահմանյան մշակութային ծառայությունների մատչելիությունը և հասանելիությունը չի բավարարում հասարակության տարբեր խմբերի պահանջմունքներին:

Երկարաժամկետ լուծումներ

<u>Տեսլական</u>. *Մշակութային արտադրանքի և ծառայությունների, պատմամշակութային ժառանգության և մշակութային արժեքների օգտագործման* ***տնտեսական բաղադրիչի խթանման միջոցով հայկական մշակույթի ավելի լայն մասշտաբներով հանրահռչակում ՀՀ-ում և արտերկրում****, մշակութային ժառանգության պահպանում և տարածում:*

1. Մարզերում մշակույթի համաչափ զարգացման խնդիրների լուծման նպատակով 2017 թվականին նախատեսվում է իրականացնել «Մշակույթը մարզերում-2017» ծրագիրը, որն իր մեջ ներառում է շուրջ 400 հյուրախաղ և միջոցառում: Մշակվել է «Մշակույթը մարզերում-2017» ծրագրի նախագիծը և միջոցառումների ժամանակացույցը, կազմվել է մարզային մշակութային հաստատությունների ամբողջական քարտեզը:

2. Նախատեսվում է ստեղծել համահայկական սիմֆոնիկ նվագախումբ: Ստեղծվել է հայազգի լավագույն երաժիշտ-կատարողների տեղեկատվական շտեմարան, որի հիման վրա ձևավորվում է համահայկական սիմֆոնիկ նվագախմբի մասնակից երաժիշտների ցանկը: Հստակեցվում են նվագախմբի

համերգացանկը, համերգների ժամանակացույցն ու անցկացման աշխարհագրությունը: Նախատեսվում է նվագախմբի առաջին ելույթն իրականացնել Հայաստանում 2017 թվականի ապրիլին:

3. Նախատեսվում է ներդնել ոլորտի կազմակերպությունների տոմսերի վաճառքի միասնական էլեկտրոնային համակարգ, արդիականացնել ոլորտում դրամաշնորհային ծրագրերի իրականացման և պետական պատվերի տեղադրման մեխանիզմները, ստեղծել և տարածել մշակութային հուշանվերային արտադրանքի մշտապես թարմացվող, ժամանակի պահանջներին համապատասխանող տեսականի:

4. Նախատեսվում է փոխել ժամանակակից հայ գրողներին պետական աջակցության տրամադրման ձևաչափն ու սկզբունքները. աջակցությունը տրամադրել ոչ թե ուղղակիորեն գրքի հրատարակմանը (բացառությամբ առաջին գրքերի և սփյուռքահայ գրականության), այլ գրողի և նրա ստեղծագործության ճանաչելիության բարձրացմանը: Նախատեսվում է նաև ստեղծել հայ գրականության թարգմանական ծրագրերի աջակցության հատուկ ֆոնդ: Նախատեսվում է իրականացնել օտարերկրյա պետություններում հայկական 400 պատմամշակութային հուշարձանների հաշվառման, վավերագրման և առկա տեղեկատվական շտեմարանի համալրման աշխատանքներ, ծախսերը նախատեսված են ՀՀ 2017 թվականի պետական բյուջեում:

Ինչ է արվել

1. ***Մշակութային կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման գործընթացներում ժամանակակից տեղեկատվական և տեխնիկական միջոցների ներդրմանն ու կիրառմանն ուղղված՝***
   - մեկնարկել են մշակութային կազմակերպություններում միասնական էլեկտրոնային տոմսային համակարգի ներդրման աշխատանքները: Մշակութային 5 կազմակերպությունում իրականացվել է պիլոտային միասնական էլեկտրոնային տոմսային համակարգի փորձարկումը: Մշակվել է

մշակութային կազմակերպություններում միասնական էլեկտրոնային տոմսային համակարգի ամբողջական ներդրման մրցութային փաթեթը, ժամանակակից կապի և տեղեկատվական միջոցների կիրառմամբ ստեղծվել են Հայաստանի 7 թանգարանների հավաքածուների մասին պատմող՝ IOS և Android օպերացիոն համակարգերի հիման վրա աշխատող «Աուդիոգիդ» բջջային հավելվածները, որոնք այցելուներին կուղղորդեն դեպի մշակութային կազմակերպություններ և կիրազեկեն մշակութային կազմակերպություններում ընթացիկ ու նախատեսվող միջոցառումների մասին:

2. ***Թատրոնների նյութատեխնիկական բազայի արդիականացմանը և վերանորոգմանն ուղղված՝***

- Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում ներդրվել և արդիականացվել են լուսաձայնային սարքավորումները, բեմական մեխանիզմները.
- մինչև տարեվերջ ավարտին կհասցվեն Արտաշատի Ա. Խարազյանի անվան դրամատիկական թատրոնի վերանորոգման աշխատանքները:

3. ***Կինեմատոգրաֆիայի ոլորտում օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունից ելնելով՝ կինոարտադրության, կինովարձույթի, միջազգային կինոփառատոներին մասնակցության, օտարերկրյա ներդրողների համար հարկային նպաստավոր պայմանների և պետական աջակցության մի շարք կարևոր խնդիրների լուծման համար՝***

- մշակվել է «Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը և ներկայացվել է ՀՀ կառավարություն:

4. ***Գրադարաններն ինտելեկտուալ զբաղմունքի կենտրոններ դարձնելու համար՝***

- ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ մասնավոր կազմակերպությունների հետ, որպեսզի նախարարության ենթակայության գրադարաններում առաջիկա ամիսների ընթացքում ընթերցողներ ունենան անվճար Wi-Fi ինտերնետ.

- հանրային գրադարանների նյութատեխնիկական բազայի զարգացման ծրագրով իրականացվում են հավատարմագրման վկայական ստացած համայնքային գրադարանների վերազինման աշխատանքները:

5. ***Թանգարաններում այցելուների համար ցուցադրությունների կազմակերպման համար, ինչպես նաև մատուցվող ծառայությունների բազմազանության և սոցիալական տարբեր խմբերի առանձնահատկությունները հաշվի առնելու տեսանկյունից՝***

- նախարարության ենթակայության թանգարաններում իրականացվում են 10 լեզվով աշխատող աուդիոգիդերի ծրագրային բջջային հավելվածների ստեղծման և դրանց տեղեկատվական ապահովման աշխատանքներ.
- գործում է Երևան քաղաքում տեղադրված՝ պատմամշակութային արժեք ներկայացնող Հ. Թումանյանի և Ա. Սպենդիարյանի արձանների «Վիրտուալ իրականություն» հավելվածը, ավարտվել են Մ. Սարյանի տուն-թանգարանի հիմնանորոգման աշխատանքները, այդ թվում՝ վերանորոգվել է տուն-թանգարանի հուշային հատվածը, որը տուն-թանգարանի հիմնական ցուցադրության մաս է կազմում.
- ընթացքի մեջ են Գորիսում գտնվող Սերո Խանզադյանի նորաստեղծ տուն-թանգարանի հիմնանորոգման, նոր մշտական ցուցադրության կազմակերպման և հավաքչական աշխատանքները:

6. ***Միջազգային համագործակցության առումով՝***

- ՀՀ մշակույթի նախարարության և ՌԴ-ի պետական էրմիտաժի թանգարանի միջև ստորագրվել է համագործակցության պայմանագիր Կարմիր բլուր հնավայրում համատեղ պեղումներ և գիտական ուսումնասիրություններ իրականացնելու վերաբերյալ:

7. ***Հնավայրերի ամրակայման, թանգարանացման և հնագիտական վայրերի մշակութային գրաածոների ուսումնասիրման ու թանգարանացման աշխատանքների իրականացման, Հայաս-***

տանում պատմամշակութային անշարժ հուշարձանների պահպանական գոտիների նախագծման և հաստատման ուղությամբ՝

- ավարտվել է ՀՀ Արագածոտնի մարզի Աղձքի համայնքի «Արշակունյաց թագավորների դամբարան» հուշարձանի պեղումների հերթական փուլը.
- «Դվին», «Արտաշատ» պատմական մայրաքաղաքների, «Աղձք» արքայական դամբարանի ամրակայման նախագծերի կազմման աշխատանքներն ընթացքում են.
- Հայաստանում պատմամշակութային անշարժ հուշարձանների 200 պահպանական գոտիների 10 հուշարձանային կադաստրի ցանկերը հաստատված են, աշխատանքների հետ կապված ծախսերը նախատեսված են ՀՀ 2017 թվականի պետական բյուջեում:

Օպտիմալացում

- ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ների միացման ձևով վերակազմակերպումների արդյունքում 31 հաստիքային միավոր կրճատվել է, տնտեսումը կազմել է 26400.0 հազ. դրամ.
- ՀՀ մշակույթի նախարարի և նախարարության աշխատա-կազմերի օպտիմալացման և «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի լուծարման արդյունքում կրճատվել է 30 հաստիքային միավոր և տնտեսվել է շուրջ 77 մլն. դրամ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Ախտորոշում

Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության ոլորտում տարիների ընթացքում ձևավորված համակարգը, չնայած վերջին տարիներին արձանագրած արդյունավետության աճին և կոռուպցիոն ռիսկերի նվազմանը, դեռևս շարունակում է բնութագրվել արդյունավետության բարձրացման անմիջական կարիք ունեցող մի շարք երևույթներով: Դրանք են՝

1) աշխատանքի և զբաղվածության ենթաոլորտում՝

ա. զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության և ծախսարդյունավետության ոչ բավարար մակարդակը,

բ. գերփոքր ձեռնարկատիրությամբ զբաղվող գործատուների համար Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի ընդհանուր պահանջների կատարումը, որը որոշակի խոչընդոտ է դրանց զարգացման համար.

2) սոցիալական աջակցության ենթաոլորտում՝

ա. ընտանիքի անապահովության գնահատման հասցեականության ոչ բավարար մակարդակը, որի արդյունքում սոցիալապես իրարից ըստ էության քիչ տարբերվող ընտանիքները կարող են հայտնվել էապես տարբեր իրավունքներ տվող կարգավիճակներում,

բ. նպաստների համակարգի՝ տվյալների բազայի անկատարությունը և ժամանակակից կառավարման մեթոդներին ոչ համահունչ հասցեականության մակարդակը,

գ. ընտանիքի սոցիալական վիճակի (պոտենցիալի, ռեսուրսների) գնահատման համակարգի անկատարությունը և սոցիալական

աշխատողների մասնագիտական կարողությունների ոչ բավարար մակարդակը.

3) երեխաների իրավունքների պաշտպանության ենթաոլորտում՝

ա. կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական պաշտպանության երաշխիքների իրացման ոչ բավարար հնարավորությունները,

բ. համայնքներում ընտանիքներին բազմաբնույթ սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների կարողությունների ոչ բավարար մակարդակը.

4) կենսաթոշակային ապահովության ենթաոլորտում՝

ա. անձի՝ իր բնակության վայրից հեռու ապրելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի, նպաստի իրավունքի իրացման դժվարությունը,

բ. առանձին խումբ անձանց կենսաթոշակի իրավունքի իրացման դժվարությունները.

5) տարեցների և հաշմանդամների ենթաոլորտում՝

ա. ակտիվ ծերացման և տարեցների սոցիալական պաշտպանության այլընտրանքային ծառայությունների նոր մոդելների ներդրման համար ոչ բավարար ռեսուրսները և պայմանները,

բ. հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և նրանց համար հավասար հնարավորությունների ու մատչելի պայմանների ոչ բավարար մակարդակը, որի արդյունքում՝

- աշխատանք փնտրողները և գործազուրկներն աշխատաշուկայում դժվարությամբ են հարմար աշխատանք գտնում.
- նպաստների առկա համակարգը չի խրախուսում աշխատանքի ակտիվ որոնումը.
- շատ անապահով ընտանիքներ դուրս են մնում սոցիալական աջակցության պետական ծրագրերից.

- կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մեծաթիվ երեխաներ իրենց խնամքն ու դաստիարակությունը տակավին ստանում են մանկատներում և գիշերօթիկներում.
- կենսաթոշակառուները ոչ միշտ են կարողանում լիարժեք իրացնել իրենց որոշակի իրավունքները. առկա է արժանապատիվ ծերության ապահովման համար անհրաժեշտ պայմանների ոչ բավարար մակարդակ.
- հաշմանդամություն ունենալու և հիվանդ լինելու հստակ չափորոշիչների բացակայությունը հաշմանդամներին հնարավորություն չի տալիս իրենց իրավունքների լիարժեք իրացման համար ստանալու հավասար հնարավորություններ, իսկ հիվանդություն ունեցող անձանց՝ համապատասխան ծառայությունների փաթեթ:

Երկարաժամկետ լուծումներ

Տեսլական. Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի ***նպատակային, արդյունավետ, թիրախավորված և թափանցիկ կառավարման համակարգի առկայություն:***

Այս ուղղությամբ նախատեսված են հետևյալ երկարաժամկետ ծրագրերը՝

1. սոցիալ-ժողովրդագրական ուղղվածություն ունեցող պետական կարգավորման նոր ծրագրերի ներդրում.
2. զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության և կառավարման արդյունավետության մեծացում.
3. կամավոր աշխատանքի բազմոլորտ ներդրում.
4. աշխատավարձի և սոցիալ-աշխատանքային նվազագույն երաշխիքների համակարգի արմատական վերանայում՝

ներդրումային միջավայրի և կայուն զբաղվածության պայմանների բարելավման նպատակով.

5. արհեստավարժ համայնքային սոցիալական աշխատողի ինստիտուտի ձևավորում.

6. կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործում.

7. ազգային օրենսդրության համապատասխանեցում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին.

8. անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության գործառույթների միջազգային դասակարգման (այսուհետ՝ ԱՀԿ ԳՄԴ) սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման նոր մոդելի կիրառում.

9. սոցիալական պաշտպանության ոլորտի միասնական տեղեկատվական համակարգի («Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգ) ներդրում.

10. սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման ու գնահատման (ՄԳ) համակարգի ամբողջական ներդրում:

Ինչ է արվել

1. ***Անձի՝ իր բնակության վայրից հեռու ապրելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի, նպաստի (երեխայի ծննդյան միանվագ նպաստ, խնամքի նպաստ, չաշխատող անձի՝ մայրության նպաստ, ծերության նպաստ, հաշմանդամության նպաստ, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ) իրավունքի իրացման դժվարությունը վերացնելու նպատակով ստեղծված են՝***

1) առցանց դիմում ներկայացնելու հնարավորություն.

2) ցանկացած տարածքային բաժին դիմում ներկայացնելու հնարավորություն:

Սա նշանակում է, որ տարեկան ավելի քան 35000 քաղաքացի կարող է, առանց տարածքային գրասենյակ այցելելու և պաշտոնատար անձին առնչվելու, դիմել և իր բանկային հաշվին ստանալ իր նոր ծնված 1-ին կամ 2-րդ երեխայի ծննդյան համար նախատեսված միանվագ նպաստը, իսկ տարեկան կտրվածքով ավելի քան 100.000 կենսաթոշակի իրավունքի իրացմանը վերաբերող տարատեսակ դիմումներ կարող են ներկայացվել՝ առանց այցելելու մշտական բնակության վայրում տեղակայված տարածքային գրասենյակ:

2. ***Ավելի վճարված կենսաթոշակի (ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների) գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում վերականգնելու գործընթացը կանոնակարգելու նպատակով՝***

1) սահմանվել է հայցային վաղեմության ժամկետ և նախատեսվել է անձի համաձայնությամբ՝ ավելի վճարված կենսաթոշակի ու նպաստների գումարների՝ վարչական կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում վերականգնելու հնարավորություն.

2) նախատեսվել է ավելի վճարված կենսաթոշակի գումարները հետ գանձել նաև կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման աշխատողից՝ բարձրացնելով պաշտոնատար անձի անձնական պատասխանատվության մակարդակը:

3. ***1992-2013 թվականների ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող՝ օրենքով սահմանված փաստաթղթերը (սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը) առանձին խումբ անձանց համար ներկայացնելու դժվարությունը*** վերացնելու նպատակով՝

1) Հայաստանի Հանրապետության երկքաղաքացու կամ կենսաթոշակային ապահովության բնագավառում ԱՊՀ երկրների միջև կնքված միջպետական համաձայնագրի մասնակից

պետությունում բնակության իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից կենսաթոշակ նշանակելու դիմում ներկայացվելու դեպքում անձի կենսաթոշակի իրավունքն իրացվում է (կենսաթոշակի գումարները վճարվում են) տարածքային բաժին դիմելու օրվանից՝ անկախ հարցման պատասխանն ստանալու ժամկետից.

2) կենսաթոշակ նշանակելու (տեսակը փոխելու, վերահաշվարկելու) համար անհրաժեշտ աշխատանքային ստաժը հավաստող արխիվային փաստաթղթերի ձեռքբերումը նախատեսվել է սոցիալական ապահովության պետական ծառայության հարցմամբ: Անձի կենսաթոշակի իրավունքն իրացվում է այդ փաստաթղթերի ստացման ժամկետներից անկախ՝ տարածքային բաժին դիմելու օրվանից:

4. ***2016 թվականի նոյեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել է N 1122-Ն որոշումը, որով բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման համար մեղմացված սակագնով պետք է վճարեն սոցիալապես անապահով այն ընտանիքները, որոնք հաշվառված են ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և ունեն 20.00 միավորից բարձր անապահովության միավոր.***

1) ընտանիքի սոցիալական վիճակի բարելավման նպատակով խնդիր է դրվել բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագնային քաղաքականության մեջ ներդնել սոցիալական աստիճանականությունն ապահովող մոտեցումներ, որոնց իրականացման նպատակով հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 25-ի N 333-Ն որոշմամբ հաստատվել է, որ սոցիալապես անապահով ընտանիքները գազի սպառման դիմաց պետք է վճարեն նվազ սակագնով՝ 100 դրամ (յուրաքանչյուր խորանարդ մետրի համար՝ մինչև 600 խոր. մետր ծախսի դիմաց): Որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից, և ծրագրից օգտվելու է շուրջ 80 հազ. սոցիալապես անապահով ընտանիք, իսկ էլեկտրաէներգիայի սպառման դիմաց մեղմացված սակագնով վճարման արտոնությունից կօգտվի շուրջ 131 հազ. ընտանիք.

2) անապահովության գնահատման մոտեցումների ու մեթոդաբանության, հիմք ընդունելով ընտանիքի յուրաքանչյուր աշխատունակ անդամի զբաղվածության ապահովման և պետական սոցիալական աջակցության ծրագրերը, հատկապես բնակչության անաշխատունակ շերտերին (երեխաներին, միայնակ տարեցներին, բազմազավակ ընտանիքներին և այլ խմբերին) ուղղելու սկզբունքային մոտեցման վերանայման նպատակով մշակվել են ընտանիքների անապահովության գնահատման նոր մոտեցումներ և մեթոդաբանության վերանայման վերաբերյալ առաջարկություններ, որոնցով գնահատվում է տնտեսապես ակտիվ անձի վարքագիծն աշխատանքի շուկայում՝ նախապատվությունը տալով առավել ակտիվ գործունեություն ծավալողներին: Այս մոտեցումն էապես հակազդելու է նպաստառու ընտանիքների սոցիալական խնամառությանը՝ հնարավորինս խթանելով նրանց աշխատելու ցանկությունը:

Արդեն իսկ մշակվել են ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխության վերաբերյալ առաջարկություններ, և համապատասխան որոշման նախագիծը կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ քննարկման:

Առաջիկա քայլեր

1. ***Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության և ծախսարդյունավետության մակարդակի բարձրացման համար առաջարկվում են՝***

1) ԶՊԳ կառուցվածքի և հաստիքների օպտիմալացում.

2) զբաղվածության կարգավորման պետական ծրագրերին հատկացվող ֆինանսական միջոցների վերաբաշխում, ըստ որի մեկ շահառուի տեղավորման համար բարձր միջին ծախս ունեցող ծրագրերից ֆինանսական միջոցներն ուղղվում են առավել ցածր միջին ծախս ունեցող ծրագրերին՝ հաշվի առնելով

զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում առավել մեծ թվով շահառուների ընդգրկման նպատակադրումը:

2. ***Գերփոքր ձեռնարկատիրությամբ զբաղվող գործատուների համար զարգացմանը խոչընդոտ հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի ընդհանուր պահանջների վերանայում,*** այդ թվում՝ համապատասխան փոփոխությունների կատարում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում, որով աշխատանքային հարաբերությունների կարգավորման որոշակի առանձնահատկություններ կսահմանվեն գերփոքր ձեռնարկատիրությամբ զբաղվող գործատուների համար: «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը կներկայացվի 2017 թվականի մարտին:

3. ***Ընտանիքի անապահովության գնահատման հասցեականության մակարդակի բարձրացում.***

Այդ նպատակով նախատեսվում է ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխություն: «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացվելու 2017 թվականի հունվարին:

4. ***Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կյանքի որակի բարելավումը, երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի, երեխայի և նրա ընտանիքի սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովում.***

Այդ նպատակով՝

- կմշակվեն և կհաստատվեն երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների ստեղծման պլան-

ժամանակացույցը և հաստատությունների (երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն) վերակազմակերպմանը վերաբերող իրավական ակտերը.

- կվերակազմակերպվեն և կբեռնաթափվեն նախարարության համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները.
- կմշակվեն հաստատությունների աշխատողների վերապատրաստման մոդուլները, կիրականացվեն վերապատրաստման ու վերաորակավորման միջոցառումներ:

2017 թվականի ընթացքում՝

- կստեղծվեն նոր վերականգնողական կենտրոններ.
- կապահովվի կենսաբանական ընտանիքում ապրող՝ դժվարին վիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաներին ու նրանց ընտանիքներին բազմամասնագիտական ծառայությունների մատուցումը:

5. ***Կենսաթոշակ և նպաստ նշանակելու ընթացակարգերը որպես հիմնական նպատակ դիտարկելով՝ շահառուի և պաշտոնյայի միջև շփումը նվազագույնի հասցնելը***: Այդ նպատակով նախատեսվում են՝

   1) կենսաթոշակ և նպաստ նշանակելու վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացի կենտրոնացում.
   2) ՔԿԱԳ-ի մարմինների հետ տեղեկատվության փոխանակության ենթահամակարգի գործարկում.
   3) էլեկտրոնային ծառայությունների շրջանակի ընդլայնում:

6. ***Կենսաթոշակների և նպաստների վճարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության միասնական կիրառման ապահովում***: Այդ նպատակով նախատեսվում են՝

   1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով բացառապես պետական կենսաթոշակների և նպաստների վճարման համար կիրառվող հատուկ

բանկային (սոցիալական) հաշվի սահմանում (այդ թվում՝ հաշիվը բացելու և վարելու առանձնահատկությունները).

2) սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի հետ տեղեկատվության փոխանակության արդյունավետության մեծացում:

7. ***Ոչ իրավաչափ վճարումների, պատահական և միտումնավոր սխալների, գործընթացին մասնակից կողմերի՝ շահառուների և պետական պաշտոնյաների կողմից ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման կապակցությամբ առկա ռիսկերի նվազեցում***: Այդ նպատակով նախատեսվում են՝

1) աշխատանքային գրքույկների էլեկտրոնային լուսապատճենների հավաքագրում և հաշվառում համապատասխան տեղեկատվական համակարգում.

2) «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում աշխատանքային ստաժի մասին տեղեկատվության մուտքագրման ընթացակարգերի վերանայում.

3) ազգային արխիվի հետ տեղեկատվության փոխանակության համակարգի գործարկում.

4) զինվորական կենսաթոշակների և այլ դրամական վճարների նշանակումն ու վճարման ապահովումն «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի միջոցով՝ այդ կենսաթոշակը նշանակող բոլոր 6 համապատասխան մարմիններում:

8. ***Սոցիալական պաշտպանության բնագավառի կառավարման համակարգի և ծառայությունների մատուցման գործընթացի կատարելագործում՝ նպատակ ունենալով սոցիալական պաշտպանության համակարգը ծառայեցնելու տնտեսական աճին և հավելյալ արժեք ստեղծելուն***: Այդ նպատակով նախատեսվում են՝

1) զբաղվածության գործակալության հենքի վրա սկզբունքորեն նոր կառույցի հիմնադրում՝ նրան վերապահելով սոցիալական աշխատանքի համակարգման գործառույթ.

2) դեպքի վարման համակարգի ինստիտուցիոնալացում՝ զբաղվածության ծրագրերը ևս դիտարկելով որպես դեպքի վարման բաղկացուցիչ.

3) ընտանեկան նպաստների համակարգի վերանայում՝ դրանք ևս դիտարկելով որպես դեպքի վարման բաղադրիչ և ոչ որպես տրվող գոյության միջոց.

4) ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում (ամբողջական կիրարկում):

9. ***Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և նրանց համար հավասար հնարավորությունների ու մատչելի պայմանների բավարար մակարդակի ապահովում:*** Այդ նպատակով նախատեսվում է իրավական դաշտի ապահովում՝

1) «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրանից բխող օրենսդրության ընդունում.

2) հաշմանդամության սահմանման նոր չափորոշիչների ներդրում, հստակ սահմանելով և սահմանազատելով «հաշմանդամություն ունենալը» և «հիվանդ լինելը», և համապատասխան ծառայությունների փաթեթների տրամադրում.

3) հաշմանդամության սահմանման նոր՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության գործառույթների միջազգային դասակարգման (ԱՀԿ ԳՄԴ) սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրում: